



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ

*Մայիս*

2015  
Ս. Էջմիածին

## ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

## ՆԻԿՈԼԱՅ ՍԵԼԵՉՆՅՈՎ

ԱՐԵՒԵԼՔԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ<sup>1</sup>

Հիմնական սկզբնաղբյուրների վերլուծություն  
դոգմայի ձևավորման պատմության համատեքստում

*Ա. Արևելքի Եկեղեցու ուսումնասիրության պատմությունից*

Միջագերբի եկեղեցին սերտորեն կապված էր Անտիոքի աթոռին և հնուց անտիոքյան գրավում էր հույն և լատին շարքի հեղինակների ուշադրությունը: Ասվածը վերաբերում է նախ և առաջ Նոմենական Արևելյան, հետագայում Բյուզանդական կայսրության հունալեզու հեղինակներին, ովքեր վկայում էին Արևելքում Միջագերբում, աստվածաբանական կենտրոնների, քաղաքի հեղինակների ու երկրի գոյության մասին, որոնք հաճախ ընթերցվում էին նախապես ավանդից ավելի լայն շրջանակներում: Այսպես, օրինակ, համաշխարհային հոջակ են ձևեր բերել «Արգար թագավորի մասին ավանդությունը» և «Աղղեի վարդապետությունը» երկերը, որոնք վկայում են քրիստոնեության ծագման առաջին իսկ օրերին Միջագերբում փրկի ունեցող իրադարձությունների մասին: Արևելքի եկեղեցու քրիստոնյաների դեմ Սասանյան հարսության թագավորների ձեռնարկած հալածանքները չէին կարող արձագանք չզգուցել կայսրության արևմտյան մասերում ապրող քրիստոնյաների շրջանակներում: Ափրահապի կերպարը, որը քրիստոնեական եկեղեցու արամեախոս ավանդության առաջին մեծ աստվածաբանն է և գրել է այս հալածանքների մասին, բավական հայտնի էր արևմտյան շրջաններում: Եղևսիայի և Մծբինի պարսից դպրոցները, որոնց սրբազան ակունքներում կանգնած էին Եփրեմ Ասորին և նրա աշակերտ Նազար Մծբնացին, շարքի շուրջում մեծ ճանաչում ձեռք բերեցին և հսկայական դեր խաղացին

1 «Էջմիածին» ամսագրի խմբագրությունն ստորև ներկայացնում է Ն. Սելեչնյովի գրքից կապարված այս առաջին հատվածի թարգմանությունը, որին կիսվել են նաև համանուն գրքից կապարված թարգմանական այլ կտորներ (Н. Селезнев, Христология Ассирийской Церкви Востока. Анализ основных материалов в контексте истории формирования вероучения, Москва, 2002):

աստիճանաբանության ու մեկնաբանության միջազգային դպրոցի ձևավորման գործում՝ միաժամանակ կարևորագույն դերակատարություն ունենալով Արևելքի ու Արևմուտքի աստիճանաբանական տարաձայնությունների և ջարհագրությունների ժամանակ: Այս ջարհագրությունը, որ հատկապես սուր կերպով ծավալվում էր քրիստոսաբանական հարցերի շուրջ, առաջնորդում վկայված է հունա-լատինական հեղինակների երկերում: Այս շրջանը, երբ հակամարտող ճամբարներում վերջնականապես ձևավորվեցին տարբեր աստիճանաբանական համակարգեր, եզրափակում է Արևելքի մելքիդ՝ արաբաքրիստոնեական հասարակության վերջին հունալեզու նշանավոր ներկայացուցիչը՝ Նովիան Դամասկացին: Նրանից հետո բյուզանդական կողմնորոշում ունեցող հեղինակների ջարհագրական երկերը, ինչպես նկատելի է Աբդ Ալլահա իբն ալ-Ֆադլ ալ-Անթաքիի պարագային, արդեն նոր գաղափարներ ու աստիճանաբանական բանաձևեր չեն ներմուծում, այլ ավելի շուր ուղղված են անցյալում ձևակերպված և այսպես կոչված մտավորական նեստորականության դեմ:

Այս իմաստով որոշակի նշանակություն են ձեռք բերում հավաքի պատմության մասին մահմեդական հեղինակների երկերը: Թ-ԺԵ դարերի արաբ կրոնագետների կողմից հավաքվում և համակարգվում էին խալիֆայություն գոյություն ունեցող ամենատարբեր կրոնների, ներառյալ նաև Արևելքի Եկեղեցու մասին տեղեկություններ: Այս մասին բավականաչափ տվյալներ են հաղորդում այնպիսի հայտնի հեղինակներ, ինչպիսիք են Իբն ան-Նադիմը (Ժ դ.), Աբու-ր-Ռաշիդան ալ-Բիրունին (973-1048/51), Իբն Նազմը (994-1064), աշ-Շահրաստանին (1076-1153), Ահմադ ալ-Քալբաշանդին (1355-1418): Ավելի քիչ հայտնի է ուշ շրջանի եմենական հեղինակ Ալի իբն Մուհամմադ իբն Աբդ Ալլահ ալ-Ֆաքրիի երկը՝ «Գիրք թագավորաց»: Ավելի ուշ՝ օսմանյան ժամանակաշրջանի պատմագրության մեջ այս մասին որևէ նոր տեղեկություն չունենք:

Օգտար հեղինակների վկայություններ պահպանվել են առանձին ճանապարհորդական նոթերում, որոնք հիմնականում դեպի Երուսաղեմ արված ուխտագնացությանը ընթացքին կատարված գրառումներ են: Այս տեսակ նյութը բավական ծավալուն է՝ Դ.-ԺԵ. դդ., որոնք կազմում են երեք տասնյակից ավելի քիչ ուսումնասիրված երկեր: Իրական և արժեքավոր դիտարկումներ առկա են միայն տարբեր միսիոներների երկերում, որոնք հատկապես հերաբրքված են եղել կրոնական-դավանաբանական տարբերություններով: Նախապես ուշադրության են արժանի Պլանո Կարպինիի և Վիլիելմ Ռուսսերոկցու (հայտնի նաև Գիյոմ դե Ռուսսերոկ անունով, որի օրագրում հիշատակվում է նաև Անդրե Լոնժյունյի ճամփորդական օրագրի մասին) ճամփորդական նոթերը, ինչպես նաև իտալացի վաճառական Մարկո Պոլոյի օրագիրը և Զիովաննի դը Մոնտե Կոմպիլոնյի նոթերը: Նմանատիպ սկզբնաղբյուրների շարքին կարելի է դասել նաև ավելի

ուշ շրջանում դեպի Ասիա ճամփորդած եվրոպական ճանապարհորդների հիշարարությունները, որոնցից առավել ուշագրավ են Յան Խոյզեն վան Լինսխոտենի (ճամփ. 1595-96 թթ.) օրագրությունը<sup>2</sup> և Տրիգոյի (ճամփ. 1607-1619 թթ.) գիրքը<sup>3</sup>:

ԺԵ. դարի կեսից սկսած ի հայտ է գալիս սկզբնաղբյուրների մի նոր տեսակ, որը նույնպես վկայում է Արևմտյան աշխարհի հետ Արևելքի եկեղեցու գործակցության մասին: Մրանք հիմնականում Արևելքի եկեղեցու այս կամ այն համայնքի՝ Ղոմի աթոռին միանալու առիթով կազմված վավերագրեր են: Առաջին նմանարիպ թուղթ-դիմումը կազմվել է Տարսոնի Տիմոթեոս եպիսկոպոսի կողմից, որի համայնքն այդ ժամանակ Կիպրոս էր գաղթում Լենկթեմուրի արշավանքների պարճառով: Իր համայնքի անունից նա մի հավարի խոստովանություն է կազմում՝ խնդրելով ընդունել իրենց Ղոմի Սուրբ Եկեղեցու գիրկը<sup>4</sup>: 1445 թ. օգոստոսի 7-ին այս հավարի խոստովանությունն ընթերցվում է ի լուր ժողովի և նույն օրն իսկ Benedictus sit Deus կոնդակով հայտարարվում է իր տեսակի մեջ առաջին միավորումը կաթոլիկ և ասորա-քաղղեսական եկեղեցիների միջև: 1552 թվականից սկսած նմանարիպ վավերագրերը դառնում են հաճախադեպ երևույթ: Նույն թվականին իսկ Ղոմում հյուրընկալվում է Յոհանան Սուլաբան՝ Ռաբբան Ղոմի վանքի վանահայրը<sup>5</sup>, որով հիմք է դրվում Արևելքի Եկեղեցուց առանձնացած և Ղոմին ենթակա նոր եկեղեցական նվիրապետությանը: Արդյունքում Միջագետքում ձեռավորվում է, այսպես կոչված, Քաղղեսական եկեղեցին:

Եվրոպացիների շրջանակում Մերձավոր և Ծայրագույն Արևելքում քրիստոնյաների գոյության վերաբերյալ հետաքրքրությունն ավելի է մեծանում, ինչը պայմանավորված էր ոչ միայն այսպեղ գործող կաթոլիկ ամենապարբեր միաբանությունների գործիչների հաղորդած տեղեկություններով, այլ նաև ընթերցող լայն շրջանակների համար նախապեսված հրատարակություններով: Ղիսուայան միաբանության ներկայացուցիչ Աթանասիոս Կիրիսերի կողմից նախաձեռնված նմանարիպ մի ձեռնարկի շնորհիվ եվրոպացիներին հայտնի դարձավ չինական քրիստոնեության հայտնի հուշարձանը՝ Սիան-Ֆուի սյունը<sup>6</sup>: Ղասարակական

2 Van Linschoten, Jan Huygen, *Itinerarie Voyage ofter Schipvaert van Jan Huygen van Linschoten*, Amsterdam, 1596; Տե՛ս նաև անգլ. թրգմն.՝ John Hvyghen van Linschoten, *His Discours of Voyages into Ye Easte and Weste Indies*, London, John Wolfe, 1598, 2 vol., 1885.

3 Trigautius, *De Christiana Expeditione apud Sinas*, Lugduni, 1616.

4 Le Quien, Michel, *Oriens Christianus, in quator patriarchatus; quo exhibentur ecclesiae, patriarchae, caeterique praesules totius Orientis*. Studio & opera R. P. F. Michaelis Le Quien... Opus posthumum. T. 1-3.- Parisiis : Typographia regia, 1740, t. 2, էջ 1292 (այստեղ տե՛ս Le Quien):

5 Vosté, J. M., *Catholiques ou Nestoriens?* // *Angelicum* 7 (1930), էջ 515-523: Տե՛ս նաև Vosté, J. M., *Mar Johanna Soulaqa*. // *Angelicum* 8 (1931); «Սուլաբայի կողմից բերված Հավատո Հանգանակը» (Ֆրանս. թրգմն.); Habbi, J., *Signification de l'union chaldéenne de Mar Sulaqa avec Rome en 1553*. // *L'Orient syrien*, XI (1966), էջ 99-132, 199-230:

6 Kircher, Athanasius, *Athanasii Kircheri Fuldensis Buchonii e Soc. Iesu Prodomus Coptus sive Aegyptiacus Ad Eminentiss: Principem S. R. E. Cardinalem Franciscum Barberinum, in quo cum*

այս հերարքրության վառ օրինակ է Թոմաս վան Էրպեյի (1584-1624) կողմից հրատարակած արաբերենի դասական քերականությունը, որի հավելվածում նա տպագրեց նաև Արենելիի եկեղեցու կաթողիկոս Էլիա ալ-Խադիսիի (1190) երկու քարոզները<sup>7</sup>: Ի հայտ եկան զանազան մասնակի պատմական ակնարկներ, որոնց թվին կարելի է դասել Յոհան Նայնրիխ Նուրբինգերի «Արենելյան պատմությունը»<sup>8</sup>, Բարթոլոմեոս դ'Էրբոյի հանրագիտարանի համապատասխան հատվածները<sup>9</sup>, ինչպես նաև Ռիչարդ Սիմոնի «Արենելյան եկեղեցական հնություններ» գործը<sup>10</sup>:

Տեղեկությունների և նյութի կուրակման արդյունքում դրանք համակարգելու և վերլուծելու անհրաժեշտություն առաջացավ: Իր չափերով կոթողային այս աշխատանքն իրականացվեց Ասսեմանի (աս-Սիմհանի) ընդհանրիկ ներկայացուցիչների կողմից, որոնցից ամենահայտնին Նովսեփ Սիմոն Ասեմանին էր (1687-1768): Նրա իսկ ջանքերով ամբողջ Մերձավոր Արենելիցի Վարիկանի գրադարան բերվեցին հսկայական քանակությամբ ձեռագրեր: Նախատեսվում էր դրանց հիման վրա ստեղծել իր չափերով հսկայական քանակությամբ մի կոթողային գործ՝ Bibliotheca Orientalis վերնագրով: Հրատարակվեց, սակայն, միայն առաջին ջրոս հատորը<sup>11</sup>: Նույն Նովսեփ Սիմոնի ջանքերով սկսվել էր նաև Եփրեմ Ասորու երկերի վեցհատորանոց ամբողջական հրատարակությունը<sup>12</sup>:

Հավանաբար նմանատիպ երկերի ստեղծման տպավորության տակ է, որ կարդինալ Նիկոլո Անտոնելլին հրատարակեց «Մեր Սուրբ Հայր Հակոբ Մծրի-

*linguae Coptae, sive Aegyptiacae, quondam Pharaonicae, origo, aetas, vicissitudo, inclination; tum hieroglyphicae litteraturae instauratio, uti per varia variorum eruditionum, interpretationumque difficillimarum, specimina, ita nova quoque & insolita method exhibentur.* - Romae: Typis S. Cong: de propag: Fide, 1636.

7 Erpe, Thomas van (1584-1624), *Arabicae linguae tyrocinium. Id est Thomae Erpenii grammatical Arabica (- Fabulae Locmani... - Sententiae quaedam Arabicae, ab Erpenio Latine reddita et notis illustratae.)...* Lugduni Batavorum [Leiden], typis et impensis Ioannis Maire, 1656.

8 Hottinger, Johann Heinrich (1620-1667), *Historia orientalis quae ex variis orientalium monumentis collecta, agit de muhammedismo... de saracenis... de chaldaismo... de statu christianorum et Judaeorum... de variis inter ipsos muhammedanos... sententiis, schismatic et haeresibus, excitatus. Accessit, ex occasione genealogiae Muhammedis... - Editio posterior et auctior... / Authore Joh. Henrico Hottingero...* - Tiguri [Zürich]: Typis Joh. Jacobi Bodmeri, 1660.

9 D'Herbelot de Molainville, Barthélemy (1625-1695), *Bibliothèque orientale, ou dictionnaire universel contenant généralement tout ce qui regarde la connoissance des peuples de l'Orient...* [precede d'un discours-préface d' A. Galland.] Par m-r d'Herbelot. - Paris: Compagnie des libraires, 1697.

10 Simon, Richard (1638-1712), *Histoire critique des dogmes des chrétiens orientaux.* - Trévoux, 1711.

11 Assemanus, Joseph Simonius, [Syrus Maronita] *Bibliotheca Orientalis Clementino-Vaticana in qua manuscriptos codices syriacos recensuit.* T. I-III. - Romae: Sacra Congregatio Propaganda Fide, 1719-1728. (T. I: *De Scriptoribus Syris Orthodoxis*, 1719; T. II: *De Scriptoribus Syris Monophysitis*, 1721; T. III: *De Scriptoribus Syris Nestorianis cont. catalogum Ebediesu († 1318)*, 1725; T. III, 2: *De Syris Nestorianis*, 1728).

12 *Ephraemi Syri opera omnia quae extant graece, syriace et latine in sex tomos distribute.* Romae, 1732-1746. - I-III: ed. Joseph Simonius Assemanus; IV-V: ed. Maronite Jesuit Mubarak, or Benedictus; VI: ed. Stephanus Evodius Assemanus.

նի եպիսկոպոսի Քարոզները», որոնք իրականում պարկանում էին Ափրահայի գրչին<sup>13</sup>: Ասսեմանի ընդամենի մեկ այլ ներկայացուցիչ՝ Նովսեփ Այոյզիուսը (1710-1782), գրեց «Պարմաժամանակագրական մեկնություն» երկը<sup>14</sup>, ինչպես նաև լատիներենի թարգմանեց Մար Արդիշո բար Բրիխա Մծրնեցու կազմած «Կանոնագիրքը», որը հրատարակվեց Անգլո Մայիի «Scriptorum Veterum Nova Collectio» շարքում<sup>15</sup>: Ասսեմանի ընդամենի երրորդ ներկայացուցիչ՝ Սպեֆանուս Էվոդիուս Ասսեմանիի կողմից հրատարակության պարբերական մարտիրոսների վարքերի ժողովածուն, որտեղ ընդգրկված էին նաև պարսից նահապարակների վարքերը<sup>16</sup>: Նույն Էվոդիուսը մյուս Ասսեմանիի՝ Այոյզիուսի հետ հեղինակեցին Վապիկանի ձեռագրացուցակը՝ *Bibliothecae Apostolicae Vaticanae codicum manuscriptorum catalogus*<sup>17</sup>, որի առաջին հատրի երրորդ և չորրորդ մասերը նվիրված են ասորական ձեռագրերին: Ասսեմանիի երկերին անմիջականորեն առնչվող մեկնություններից պարբ է առանձնացնել ԼըԳյենի (*Le Quien*) *Oriens Christianus*-ը<sup>18</sup> և Լակրոզի (*LaCroze*) «Քրիստոնեության պարմությունը Նոդկասարանում» գիրքը<sup>19</sup>:

ԺԹ. դարը մի յուրահատուկ *կրեշենդո* էր նոր հրատարակությունների լույս տեսնելու առումով, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված էին Արևելքի եկեղեցու պարմության և աստվածաբանության հետ: Շնորհիվ քաղաքական իրադարձությունների և առևտրական նոր իրավիճակի՝ Արևելքում ավելի մեծացավ արևմտյան երկրների և Ռուսաստանի ազդեցությունը: Այս իմաստով Արևելքի եկեղեցու ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումներից քաղած տպավորությունները՝ օրագիր կամ նոթեր, կարևորագույն սկզբնաղբյուր են ուսումնասիրության համար: Դավանական ինքնորոշման սովոր ամերիկացիներն ու անգլիացիները վկայում են «նեստորականների» հետ իրենց հանդիպումների մասին՝ միաժամանակ փորձելով կրկին ու կրկին վերլուծել նրանց դավանաբանության հետ իրենց սեփական դավանանքի համադրության աստիճանը: Նմա-

13 **Antonelli, N.**, *Sancti Patris nostril Iacobi episcopi Nisibeni Sermones.* - Romae, 1756; Վերասպ. Venezia, 1765 (այսուհետ տե՛ս **ANTONELLI**, 1756, 1765):

14 **Assemani, Joseph A.**, *De Catholicis seu Patriarchis Chaldaeorum et Nestorianorum, Commentarius Historico-Chronologicus.* - Rome, 1775; Վերասպ. Farnborough (England): Gregg International, 1969.

15 pt. I, էջ vii, viii and 1-168; pt. II, էջ 1-268, և այլն:

16 **Assemanus, Stephanus Evodius**, *Acta sanctorum martyrum orientalium et occidentalium in duas partes distributa, accedunt acta s. Simeonis Stylitae omnia nunc primum e bibl. apost. vatic. prodeunt.* Steph. Evod. Assemanus archiepiscopus Apameensis chaldaicum textum recensuit lat. vertit. Admonitionibus perpetuisque adnotationibus illustravit. 2 vol. - Romae, 1748.

17 [**Assemanus, Steph. Evodius & Joseph Aloysius**], *Bibliothecae Apostolicae Vaticanae codicum manuscriptorum catalogus, in tres partem distributus.* - Romae, 1756-1769.

18 Տե՛ս **Le Quien**, 1740.

19 **La Croze, M. V.**, *Histoire du Christianisme des Indes.* - la Haye, 1724.

նապիպ առաջին գրառումներից են Ջասպին Պերկինսի օրագրությունները<sup>20</sup>: Այն մասին, թե ինչպես էին Արեւելք ժամանած արեւմտյան միսիոներները պարկերացնում իրենց հանդիպած մարդկանց, կարելի է դադարել Հասիսելյա Գրանրի գրքից, որը փորձում էր համոզել ընթերցողին իր գրած՝ «Իսրայելի կորսված ցեղերի»<sup>21</sup> գոյության փաստը: Այս շրջանում գրված օրագրություններից ավելի ուշարժան է Ջորջ Պերսի Բեդջերի երկհատոր աշխատությունը՝ «Նեստորականները եւ նրանց ծիսակարգը»<sup>22</sup> խորագրով: Գրքում հեղինակը փորձում է շարադրել եւ վերլուծել Արեւելքի եկեղեցու դավանությունը՝ հենվելով հիմնականում դավանական եւ ծիսական մատյանների վրա: Սույն աշխատությունը բավական մեծ արձագանք գտավ: Գրքի հիմնական թերությունն այն է, որ հեղինակն աստիճանաբար հեռանում է իր իսկ դավանած անգլիկանության «ԼԹ դրոյթներից»: Միայն այսպիսով կարելի է բացատրել նրա թույլ տված մի քանի հիմնական սխալները:

ԺԸ. դարին բնորոշ ակնարկային բնույթի ուսումնասիրություններին հակառակ, ԺԹ. դարն առանձնանում է ամենապարբեր ուղղություններով ու ոլորտներում արված մասնագիտական խորն ուսումնասիրություններով: Մերձավոր Արեւելքում գործունեություն ծավալած միսիոներների գրառումների կողքին մասնակի տեղեկություններ են հայտնվում նաեւ Չինաստանում Արեւելքի եկեղեցու առաքելության մասին<sup>23</sup>, շարունակվում են ասորական ձեռագրերի հա-

20 PERKINS, Justin, *Residence of Eight Years in Persia Among the Nestorian Christians*. - Andover, 1843.

21 GRANT, Asahel, *The Nestorians, or the Lost Tribes, Containing Evidence of Their Identity*. - New York: Harper and Brothers, 1845; LAURIE, Thomas, *Dr. Grant and the Mountain Nestorians*. - Boston, 1856.

22 BADGER, George Percy, *The Nestorians and Their Rituals. With the Narrative of a Mission to Mesopotamia and Coordistan in 1842-1844, and of a late visit to those countries in 1850; also, researches into the present condition of the Syrian Jacobites, papal Syris, and Chaldeans, and an inquiry into the religious tenets of the Yezedeeds/* by George Percy Badger. Vols. 1-2. - London: Joseph Masters, 1852: Բ. հրատ.: - Farnborough, Engl.: Gregg International Pub., 1969; Գ. հրատ.: - London: Darf Publishers, 1987 (այստիկտ տե՛ս BADGER, 1852):

23 BUCHANAN, Claudius, *Christian Researches in Asia: With Notices of the Translation of the Scriptures into the Oriental Languages*. Բ. հրատ. - Boston: Armstron, Cornhill, 1811; HAVRET, Henri, *La stèle chrétienne de Si-ngan-fou.// Variétés sinologiques*. - Changhai, 1833, էջ 31-105; PAUTHIER, G., *De la réalité et de l'authenticité de l'inscription nestorienne de Si-ngan-fou, relative à l'introduction de la religion chrétienne en Chine dès le VIIe siècle de notre ère.// Annales de philosophie chrétienne*, շարք IV, հուն. XV, 1857, էջ 43-60, 258-280, 450-465; հուն. XVI, 1857, էջ 127-153, 267-285; Տե՛ս նաեւ PAUTHIER, G., *L'inscription syro-chinoise de Si-ngan-fou, monument nestorien élevé en Chine l'an 781 de notre ère et découvert en 1625. Texte chinois accompagné de la prononciation figurée, d'une version latine verbale, d'une traduction française de l'inscription et des commentaries chinois*. - Paris, 1858. - (études Orientales 2); СПАССКИЙ, А. А., *Описание древнего христианского памятника, открытого в Китае в 1625 г.// Труды Киевской Духовной Академии*, 1860, ч. 11; ПАЛЛАДИЙ (КАФАРОВ), *Старинные следы христианства в Китае по китайским источникам.// Вост. сб. т. I. - СПб, 1872:// Китайский благовестник*, 1/2001, էջ 36-82:

վաքագրումը, ցուցակավորումը<sup>24</sup>, ուսումնասիրությունների հրապարակությունը, որոնք հիմնականում վերաբերում էին Ժողովների պատմությանն ու այդ ժամանակաշրջանի կարևոր պատմական դեմքերին: Միևնույն հեղինակը կարող էր գիրական գրադավածությամբ փայլել ամենապարբեր ոլորտներում: Այսպես, օրինակ, Էդվարդ Զախաուն նյութեր էր հավաքում նաև ստորական ձեռագրերի մասին, նաև Անպիոբյան դպրոցի, նաև Թուրքմենսարանի ու Չինասարանի հուշարձանների վերաբերյալ: 1869 թ. նա հրապարակեց Թեոդոր Մոփսուեստացու՝ ասորերենով պահպանված երկերի պատմականները, որով արքայազնություն էր Անպիոբա-Միջագետքյան ասորականական դպրոցի կենտրոնական կերպարների հանդեպ աճող հետաքրքրությունը<sup>25</sup>: Ներքին Բարկլիի Սվեյթը 1880-1882 թթ. հրապարակեց Թեոդորի՝ Պողոս առաքյալի թղթերի մեկնությունը<sup>26</sup>: Նույն ժամանակաշրջանում Ափրահապի մասին իր արեւնախոսությունն է հրապարակում Ժակ Ֆորժեն<sup>27</sup>: ԺԹ. դարի երկրորդ կեսից սկսած՝ գիտնականներն ավելի ու ավելի կենտրոնանում են առանձին հեղինակների ու պատմական դեպքերի ուսումնասիրության վրա: Նույն դարի վերջին տրեյի է ունենում մի իրադարձություն, որը գիտնականներին վերջնականապես համոզում է, թե Արևելքի եկեղեցու մասին ամբողջական ու հստակ գաղափար կազմելուց առաջ նախ պետք է ուսումնասիրել դեռևս առկա նշանակալի պատմական նյութը: 1885 թվականի նոյեմբերի 14-ին հայրնվում է առաջին տրեյությունն այն մասին, որ Սեմիրեցիայի քարաձառյանում՝ Պիշպեկ (ներկայիս Բիշքեկ) քաղաքի մերձակայքում եւ Մեծ Թորմաք բնակավայրում, հայրնաբերվել են ԺԳ.-ԺԴ. դարերի գերեզմանոցներ՝ ասորաթուրքերեն արձանագրություններով: Սրանք վկայում էին Թուրքմենսարանում Արևելքի եկեղեցու՝ վաղուց ի վեր մոռացված լայնածավալ քարոզչության ու առաքելության մասին: Այս հայրնագործությունը ցնցեց գիրական աշխար-

24 PAYNE-SMITH, R., *Catalogi codd. Mss. Bibliothecae Bodleianae pars VI, codd. syriacos, cars-humicos, mandaeos complectens*, confecit R. Payne-Smith. - Oxon, 1864; WRIGHT, W., *Catalogue of the Syriac Manuscripts in the British Museum Acquired Since the year 1838*. Հտ. I-III. - London, 1870 (I), 1871 (II), 1872 (III); ZOTENBERG, H., *Manuscripts orientaux. Catalogue des manuscrits syriaques et sabéens (mandaites) de la Bibliothèque nationale*. - Paris, 1874.

25 SACHAU, E., *Theodori Mopsuesteni Fragmenta Syriaca*, խմբ. E. Sachau. - Lipsiae (Leipzig): G. Engelmann, 1869. [Syriac and Latin]

26 SWETE, Henry Barclay (խմբ.), *Theodori Episcopi Mopsuesteni in Epistolas B. Pauli Commentarii*. The Latin Version with the Greek Fragments With an Introduction Notes & Indices, vol. I Introduction. Galatian-Colossians. - Cambridge: Cambridge University Press 1880; vol. II 1 Thessalonians-Philemon. - 1882; Վերաստ. Westmead (etc.): Gress, 1969..

27 FORGET, Jacobus, *De vita et scriptis Aphraatis sapientis Persae. Dissertatio historico-theologica quam cum subjectis thesibus* (Diss. Inaug. Louvain). - Louvain, 1882: Ափրահապի գրավոր ժառանգության ուսումնասիրությունները հիասքանչ կերպով շարունակել է հիշյալ հեղինակը PARISOT, Joannes, *Aphraatis sapientis persae demonstrations*. Textum syriacum vocalium signis instruxit latine vertit, notis illustravit D. Joannes PARISOT. - Patrologia Syriaca, hun. I-II. - Parisiis, hun. I - 1894, hun. II - 1907 (այսուհետ տե՛ս PARISOT, hun. I - 1894, hun. II - 1907):



իր, եւ սկսվեց գիրական հրատարակությունների մի ամբողջ շարք<sup>28</sup>: Պարզ դարձավ, որ գիրականների մեծ մասը բավական դժվար վիճակում է հայտնվել<sup>29</sup>, եւ որ Արեւելքի եկեղեցու ավանդույթները հասկանալու համար ո՛չ Քրդստանից քաղված տեղեկությունները, ո՛չ էլ մինչ այդ հայրնի աստվածաբանական պարկերացումներն Արեւելքի եկեղեցու մասին բավարար չեն: Նարկ էր ուսումնասիրել չուսումնասիրված ասորական հսկայածավալ մշակութային ժառանգությունը եւ այն հուշարձանները, որոնք պահպանվել եւ մարդկությանն էին հասել Արեւելքի եկեղեցու ծավալման արդյունքում:

ԺԹ. դարավերջը եւ Ի. դարասկիզբը Արեւելքի եկեղեցու ավանդությունների վերաբերյալ դասական մենագրությունների ու հիմնարար աշխատությունների սրեղծման ժամանակաշրջանն է: Այս շրջանի մասին ամբողջական պարկեր

28 ПАНТУСОВ, Н., *Памятники несторианства в Средней Азии.*// газ. Туркестанские Ведомости, No. 46, 1886; Տե՛ս նաեւ ПАНТУСОВ, Н., *Христианское кладбище близ города Пишпека (Семиреченской области) в Чуйской долине.*// Христианские памятники в Семиреченской области. - СПб, 1886 (Բ. հրատ.), էջ 12-37 [առաջնատիպ՝ ЗВОИРАО, т. I, 1887, էջ 74-83 (այսուհետ տե՛ս ПАНТУСОВ, (Բ. հրատ.), 1886)]; ХВОЛЬСОН, Даниил Авраамович, *Предварительные заметки о найденных в Семиреченской области сирийских надгробных надписях.*// Христианские памятники в Семиреченской области. - СПб, 1886, էջ 12-37 [առաջնատիպ՝ ЗВОИРАО, т. I, 1887, էջ 84-109]; Ամբողջ Հոդվածը// ЗВОИРАО, т. I, 1887, էջ 84-109, 217-221, 303-308; Տե՛ս նաեւ ХВОЛЬСОН, Д. А., *О сиро-несторианских надгробных надписях, найденных в Семиреченской области.*// Труды археологических съездов (ТАС), VIII, т. 4. - СПб, 1890, էջ 110-111 (այսուհետ տե՛ս ХВОЛЬСОН, 1886, 1890); ЛЮТОВ, М., *Несторианство в Средней Азии.*// газ. Туркестанские Ведомости (ТВ), No. 18, 19, 1886 (այսուհետ տե՛ս ЛЮТОВ, 1886); ЯДРИНЦЕВ, Н., *Несторианство в Азии.*// Восточное Обозрение, No. 14, 38, 1886; Տե՛ս նաեւ ЯДРИНЦЕВ, Н., *Археологические изыскания и открытия д-ра Пояркова близ Токмака.*// Зап. АН, т. 52, СПб, 1886 (Բ. հրատ.), (այսուհետ տե՛ս ЯДРИНЦЕВ, (Բ. հրատ.), 1886); НИКОЛЬСКИЙ, М. В., *О сирийских надписях в Семиреченской области.*// Труды Имп. Моск. Археол. Общ-ва (ТМАО), т. 12, 1888, Протоколы МАО, էջ 4-5 (այսուհետ տե՛ս НИКОЛЬСКИЙ, 1888); RADLOFF, W., *Der Bericht des Herrn Professor Chwolson über die in dem Gebiete von Semiretschie aufgefundenen Srischen Grainschriften.*// Bulletin de l'Académie Impériale des sciences de St.-Petersbourg (BAS), t. 32, 1888, էջ 464-465; МА, т. 9, 1888, էջ 595-597 (այսուհետ տե՛ս RADLOFF, 1888); СЛУЦКИЙ, С. С., *Семиреченские несторианские надписи.*// Древности восточные, т. I, вып. 1. - М., 1889, էջ 1-66; Տե՛ս նաեւ СЛУЦКИЙ, С. С., *К семиреченским несторианским надписям.*// Древности восточные, т. I, вып. 2. - М., 1891, էջ 176-194 (այսուհետ տե՛ս СЛУЦКИЙ, 1889-1891); HALÉVY, Jean, *De l'introduction du christianisme chez les tributes turques de la Haute-Asie, à propos des inscriptions de Semirjetschie, par MM. Chwolson et Radloff.*// Revue de l'histoire des religions, Annales du muse Guimet, Paris, juillet-août 1890, t. XXII, n I, էջ 289-301 (այսուհետ տե՛ս HALÉVY, 1890); БАРТОЛЬД, В. В., *О христианстве в Туркестане в домонгольский период (по поводу семиреченских надписей).* - СПб, 1893, (Բ. հրատ.), (այսուհետ տե՛ս БАРТОЛЬД, (Բ. հրատ.), 1893); հմմտ.// БАРТОЛЬД, В. В., *Сочинения*, т. 2, ч. 2. - М., 1964, էջ 265-302 (299-302 - прил.); անգլ. թրգմն.՝ BARTHOLD, Vasilii V., *Turkestan Down to the Mongol Invasion.*/ ռուս. 3-րդ հրատ.՝ անգլ. թրգմն., 1963; КОРШ, Ф. Е., *О турецком языке семиреченских надгробных надписей.*// Древности восточные, т. I, вып. I. - М., 1893, էջ 67-72 (այսուհետ տե՛ս КОРШ, 1893):

29 Այսպես, օրինակ, Ժամ Հայելին (տե՛ս HALÉVY, 1890) ամենայն լրջությամբ ենթադրում էր, որ եթե դամբանաքարերի վրա պահպանված արձանագրություններում գերակշռող մաս է կազմում տոնացույցային կենդանակերպի ցիկլը, ապա դա, անկասկած, վկայում է եգիպտական ազդեցության մասին:

սրեղծելը բավական դժվար է, որովհետև նախ և առաջ այդպիսի հրապարակությունները բավական մեծ թիվ են կազմում, այնուհետև դրանք հիմնականում առանձին հեղինակների և ուսումնասիրողների, հաճախ նույնիսկ գիտական խմբի արպարումների արդյունք են, որոնք, սակայն, չունեն գիտական դպրոց կամ ուղղություն սրեղծելու նպատակ: Այդ իսկ պարճառով սահմանափակվենք միայն Արևելքի եկեղեցու աստվածաբանության պարմության համար կարևոր աշխատությունների և ձեռքբերումների շեշտադրումով ու քննարկումով:

Այս առումով մեծ նշանակություն ունեն Արևելքի եկեղեցու Ե-Է դդ. ժողովական փաստաթղթերի ժողովածուի՝ Սյունիսադոսի կամ Synodicon Orientale-ի հրապարակությունը՝ նախ գերմաներեն<sup>30</sup>, ապա և ֆրանսերեն թարգմանություններով<sup>31</sup>: Ժան-Բապտիստ Շաբոն՝ Synodicon-ի հրապարակիչը, մի շարք ուսումնասիրություններ գրեց արևելաստորական ավանդությունների մասին: Մասնավորապես, նրա ուշադրության կենտրոնում էր Միջագետքի աստվածաբանական կենտրոնի՝ Մծբինի դպրոցի պարմությունը<sup>32</sup>, որին հետագայում ծավալում ու ամբողջական մի առանձին աշխատություն նվիրեց Արթուր Վյոբուսը<sup>33</sup>, ինչպես նաև Մար Նարսայի կարևոր պարմական կերպարն ինչպես այդ դպրոցի պարմության, այնպես էլ Արևելքի եկեղեցու աստվածաբանական մտքի զարգացման պարմության մեջ ընդհանրապես<sup>34</sup>: «Journal Asiatique»-ում, որտեղ սովորաբար լույս էին տեսնում Շաբոնի ուսումնասիրությունները, հրապարակվեց Մար Նարսայի ճառ-ներբողյանը՝ նվիրված երեք մեծ ուսուցիչներին՝ Դիոդորոս Տարսնացուն, Թեոդոր Մոփսուեսպացուն և Նեստորին: Այս ճառից արդեն պարզ է դառնում, թե նրանցից յուրաքանչյուրն ինչ դիրք է զբաղեցնում

30 BRAUN, Oskar, *Das Buch der Synhados, oder, Synodicon orientale: die Sammlung der Nestorianischen Konzilien, zusammengestellt im neunten Jahrhundert: nach der Syrischen Handschrift, Museo Borgiano 82, der Vatikanischen Bibliothek.* / Übersetzt und erläutert, mit kritischen und historischen Anmerkungen, Namen- und Sachregistern [von] Oscar Braun. – Stuttgart/ Wien, 1900; Վերասպ. Amsterdam: Philo Press, 1975.

31 CHABOT, Jean Baptiste, *Synodicon Orientale ou recueil des synodes nestoriens*, publié, traduit et annoté par J. B. Chabot. – Paris: Imprimerie Nationale, C. Klincksieck, 1902. – (Notices et extraits des manuscrits de la Bibliothèque Nationale et autres bibliothèques publiés par l'Académie des inscriptions et belles-lettres, t. 37).

32 CHABOT, Jean Baptiste, *L'École de Nisibe, son histoire, ses statuts. Lecture faite à la séance générale du 18 juin 1896.* // Journal Asiatique, tome VIII, 9 sér., No. 2 (juillet/déc.), 1896a, էջ 43-93:

33 VÖÖBUS, Arthur, *The statutes of the School of Nisibis. (խմբագրումը, թարգմանությունն ու ծավալումը պարմությունը Արթուր Վյոբուսի)* / Papers of the Estonian Theological Society in Exile, Vol. 12. – Stockholm: ETSE, 1962: Հմմտ. VÖÖBUS, A., *History of the School of Nisibis.* CSCO Vol. 266, Subsidia t. 26. – Louvain, 1965: Տէն Խաւէ՛ [SCHER, Addai], Barhadbesabba 'Arbaya, (évêque de Halwan), *Cause de la foundation des Écoles.* Éd. Abp. Addai Ibrahim SCHER. / Texte syriaque publié et traduit par Addai SCHER. // PO t. IV, fasc. 4. – Paris, 1908. – (Turnhout (Belgique): Editions Brepols, 1971).

34 CHABOT, Jean Baptiste, *Narsai le docteur et les origines de l'Église de Nisibe, d'après la chronique de Barhadbesabba.* // Journal Asiatique, tome VI, 10 sér., No. 2 (juillet/déc.), 1905, էջ 157-17:

Արեւելքի եկեղեցու աստվածաբանական ավանդության մեջ<sup>35</sup>: 1905 թ. Ալֆոնս Մինգանան Մոսուլում (Իրաք) հրատարակեց Մար Նարսայի քարոզների ու օրհներգերի երկհատոր ժողովածուն<sup>36</sup>, իսկ 1909 թ. հրատարակվեցին ծիսական մեկնությունները<sup>37</sup>:

Նմանապիպ վավերագրերը հնարավորություն տվեցին վերանայելու մինչ այդ Արեւելքի եկեղեցու նկատմամբ ձեւավորված կանխակալ որոշ մտայնումներ, ինչպես նաև ցույց տվեցին վերջինիս բավական հարաբերական կապը նեստորականության հետ, ինչի շուրջ ժամանակին այդքան սուր կերպով վիճում էին Կոստանդնուպոլսում: Ի. վերջո հնարավոր եղավ նաև հասկանալ, թե ինչպես էին Արեւելքում ընկալվում Դիոդորոսը, Թեոդորը եւ Նեստորը, որոնք հընթացս դուրս էին մղվել եւ մերժվել ողջ արեւմտյան քրիստոնեական աշխարհի կողմից: Իսկ երբ 1910 թ. աբբահայր Փրանսուա Նոուն հրատարակեց ասորերենից թարգմանված Նեստորի ինքնարդարացման փրակատարը<sup>38</sup>, գիրական հասարակությունն արդեն չգարնացավ, երբ այնտեղ գրավ նեստորականությունից փարբեր մի բան:

Միևնույն ժամանակ սկսում են հրատարակվել նաև արեւելյան քրիստոնեության մյուս երեւելի գործիչների երկերը: 1915 թ. Corpus Scriptorum Christianorum Orientalium շարքում Արթուր Վասիալդեն հրատարակում է Մար Բարբա Ռարբայի հիմնական քրիստոսաբանական երկը՝ «Միության գիրքը»<sup>39</sup>: Այս հրատարակությանը նախորդել էր նույն շարքում փայլած Մար Բարբայի ժամանակակից կաթողիկոս Մար Իշոխիաբա Գ.-ի թղթերի ժողովածուն<sup>40</sup>, ինչպես նաև մի քանի այլ հրատարակումներ, որոնք նվիրված էին նրա հակառակորդ

35 [MARTIN], *Homélie de Narsès sur les trios docteurs nestoriens*, par M. L. MARTIN// Journal Asiatique, tome XIV, sér. 9, No. 2 (nov./déc.), 1899, էջ 446-492 (Մուսք՝ էջ 446-449; ասոր. բնագիր՝ էջ 450-492); Journal Asiatique, 1900, tome XV, sér. 9, No. 1 (mai/juin), էջ 469-525 (ֆրանս. թրգմն.):

36 MINGANA, A., *Narsai doctoris syri homiliae et carmina* primo edita cura et studio D. A. Mingana. 2 vols. - Mausilii, 1905.

37 [CONNOLLY], *The Liturgical homilies of Narsai.*/ անգլերեն թարգմանությունը, ներածությունը հանդերձ, կատարել է հիշյալ հեղինակը՝ **Dom Richard Hugh CONNOLLY**; հավելվածը՝ **Edmund BISHOP**. - Cambridge (England): University Press, 1909. (- Nendeln, Liechtenstein: Կրաուսի (Kraus) վերահրատ., 1967).

38 [NAU], Barhadbešabba 'Arbaya, *La seconde partie de l'histoire ecclésiastique*. Éd. F. NAU// Patrologia Orientalis t. IX, fasc. 5. - Paris, 1913: Անգլերեն թարգմանությունն այդքան էլ ճշգրիտ չէ՝ [DRIVER, G. R. & L. HODSON], NESTORIUS, *The Bazaar of Heracleides*: Ասոր. նոր թարգմանությունն ու խմբագրումը՝ ներածությամբ, ծանոթագրություններով եւ հավելվածով հանդերձ՝ **G. R. DRIVER** եւ **Leonard HODSON**. - Oxford: Clarendon Press, 1925.

39 VASCHALDE, A., Babai Magni, *Liber de Unione*, խմբ. եւ թրգմն.՝ **A. VASCHALDE**.// CSCO, Vol. 79-80. - Louvain, 1915 (1953): Տե՛ս նաև Մար Բարբային նվիրված հետետյալ ուսումնասիրությունը՝ **GRUMEL, V.**, *Un théologien nestorien, Babai le Grand.*// Échos d'Orient 22 (1923), էջ 153-81, 257-80; 23 (1924), 9-33, 162-77, 257-74, 395-99.

40 **DUVAL, R.**, *Isô'yahb Patriarchae III Liber Epistularum*. CSCO 11/Syr. 11 - Syr. II 64: Textus; 12/Syr. 12 - Syr. II 64: Versio [LT]. - Paris-Leipzig, 1904-1905.

Մարտիրոս-Սահղոնային<sup>41</sup>: Նույն այդ փորձում հրապարակվեցին կաթողիկոս Մար Տիմոթեոս Ա.-ի թղթերը<sup>42</sup> և նրան նվիրված մենագրություններ<sup>43</sup>, մինչդեռ մի փոքր ավելի վաղ արդեն լույս էր տեսել Մծբինի մարտապուլիպ Եղիա բար Շնայայի հիմնական ջաբազովական երկը<sup>44</sup>: Նավելումն՝ արդեն Նովսեփ Ասսեմանու կողմից փայլած Մար Արդիշո բար Բերիխայի «Մարգարտի»՝ ասորաքաղղեական հոգևորական Նովսեփ զը Բեր Բելայթայի ջանքերով Ուրմիայում 1916 թ. հրապարակվում և 1928 թ. Մոսուլում վերահրապարակվում է նույն հեղինակի «Եղեմական դրախտը»<sup>45</sup>:

Ուրմիայի և Մոսուլի հրապարակությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև արևմտյան միսիոներների գործունեությունը, որը հասկանալի ակտիվացավ ԺԹ. դարավերջին և Ի. դարասկզբին: Նրանցից շատերը գործում էին ունիայի կամ ունիթոռոթյան սկզբունքի համաձայն՝ ասորիներին միացնելով իրենց դավանանքին և նրանց եկեղեցական ավանդությունից թողնելով միայն արտաքին փարբերանչաններ: Այս իմաստով բոլորովին փարբեր բնույթ ուներ Քենթրերիի արքեպիսկոպոսի առաքելությունը, որի ներկայացուցիչներն աստիճանաբար կարողացան հասկանալ և արևմտյան աշխարհին ցույց տալ արևելաստորական ավանդության ներքին փրամաբանական կառուցվածքը և հարստությունը: Արդեն հիշարակված Զորջ Պերսի Բեդջերը (1815-1888), Արթուր Ջոն Մակլինը (1858-1943) և Ուիլյամ Էյնգեր Ուիգրենը (1873-1953), երեքն էլ վկայեցին մի բանի մասին՝ Արևելքի եկեղեցուն հերկափկոսության մեջ մեղադրելն անհիմն է<sup>46</sup>:

41 CHABOT, Jean Baptiste, *Le Livre de la Chasteté, compose par Jésudenah, évêque de Baçrah.* - Rome, 1896b (Mélanges d'archéologie et d'histoire ecclésiastiques publiés par L'École française de Rome, vol. XVI); GOUSSEN, H., *Martyrius-Sahdona's Leben und Werke, nach einer syrischen Handschrift in Strassburg i. E. Ein Beitrag zur Geschichte des Katholizismus unter den Nestorianern.* - Leipzig, 1897.

42 BRAUN, Oskar, *Timothei patriarchae I epistulae* (I). CSCO 74-75, *Scriptores syri* 30 (բնագիր), 31 (լատ. թրգմն.), 1914-1915; Վերատպ.՝ Paris, 1953.

43 LABOURT, J., *De Timotheo I nestorianorum patriarcha (728-823) et christianorum orientalium conditione sub chaliphis abbasidis.* - Paris, 1904b.

44 HORST, L., *Buch vom Beweis der Wahrheit des Glaubens.* - Colmar, 1886.

45 [DE KELAITA], *The Paradise of Eden by Mar Abhdiso Bar-Brikha, Metropolitan of Nisibin & Armenia, 1291-1316, A. D., Compared in Details With Six Ancient Mss./* Printed and Published by The Revd. Joseph E. Y. De KELAITA, Founder and Principal of the Assyrian School & Press, Mosul, 1921-1928. First Edition - Urmia, 1916; Second Edition - Mosul, 1928.

46 Տե՛ս BADGER, 1852; MACLEAN, Arthur John and BROWNE, William Henry, *The Catholicos of the East and his people. The impressions of five year's work in the "Archbishop of Canterbury's Assyrian Mission".* - London: S. P. C. K., 1892; WIGRAM, W[illiam]. A[jinger]., *The Doctrinal Position of the Assyrian or East Syrian Church.* Prefaced by a memorandum on our relation to the separated churches of the East by John Wordsworth. - London: S. P. C. K., 1908; Տե՛ս նաև WIGRAM, W[illiam]. A[jinger]., Rev., *Intercommunion with the Assyrian Church.* - London; Manchester: The Faith Press, 1920. - (Eastern Church Books); COAKLEY, J. F., *The Church of the East and the Church of England. A History of the Archbishop of Canterbury's Assyrian Mission.* - Oxford: Clarendon Press, 1992; Տե՛ս նաև COAKLEY, J. F., *The Orthodoxy of the Church of the East: Some Early Voices.*// The

Նոտնակաթուղիկ միսիան, որի գործունեությունը նշանավորվեց 1830 թ. նոր, Քաղղեական եկեղեցու հռչակումով, թողել է ոչ պակաս թվով վավերագրեր: Դժբախտաբար դրանք հիմնականում անհասանելի են ուսումնասիրողների մեծ մասի համար: Ավելի նշանակալի են, իբրև պարմական ամբողջական ուսումնասիրություններ, 1902 թ. լույս տեսած Շմուել Ջամիլի և Քաղղեական եկեղեցու պարբիարք Մար Գիվարգիսա Արդիշո Քիսայաթթայի աշխատությունները<sup>47</sup>, որոնք նվիրված են Միջագետքի եկեղեցու և Նոմի հարաբերություններին:

Ի. դարի կեսերին Արևելքի եկեղեցու ուսումնասիրության գործընթացը բնորոշվում է հետևյալ երևույթներով:

Նախ և առաջ վերլուծության է ենթարկվում արևմտյան միսսիոներների գործունեությունն Արևելքի եկեղեցում: Մերձավոր Արևելքում արևելի ունեցող նպատակասլաց քաղաքական փոփոխություններն սրիպում են նորովի ամփոփել դրանց արդյունքը նոր պարմական ժամանակաշրջանի շնմին: Եկեղեցական պարմության և դոգմայի պարմության ոլորտներում լույս են տեսնում նոր գրքեր, որտեղ հեղինակները փորձում են սրելով նոր փայլների հիման վրա արևելաստորական ավանդությանը նվիրված բաժիններ: Այս առումով հետաքրքրությունն ավելի ուժեղացավ Մինգանայի երկու հրատարակություններից հետո. առաջինն ասորերենից անգլերեն թարգմանած Թեոդոր Մոփսուեստացու Նավարի հանգանակի մեկնությունն էր, և երկրորդը՝ նրա ծիսական-խորհրդապաշտական ուսուցումները<sup>48</sup>: Շար գիտնականներ սրիպված եղան ընդունելու, որ ասորական փարբերակի մեջ Թեոդորի միտքն ավելի փրամաբանված է, ինչը վերհանում էր երկու հիմնական փիլիսոփայի՝ ասորական և հունական աստվածաբանական դպրոցների միջև բախման պարմության կարևորագույն կետերից մեկը:

Այս ամենին զուգահեռ՝ շարունակեց լայնանալ հնագիտական հայտնագործությունների և սկզբնաղբյուրների շրջանակը: Ավրելիոս Շրեյնի և Պոլ Պեյրոյի աշխատանքները Սոգդիայի և սոգդերենի հետ կապված նյութերի ու-

Messenger (مessenger), Issue Number 11, Մարտ 31, 1995, էջ 32-35; ֆրանս. թրգմն.// Istina (Paris), XL, 1995, No. 2, էջ 178-181.

47 GIAMIL, S[amuel], *Genuinae relations inter Sedem apostolicam et Assyriorum orientalium seu Chaldaeorum Ecclesiam. Nunc majori ex parte primum editae historicisque adnotationibus illustratae*/ cura et studio Samuelis Giamil. - Roma: E. Loescher, 1902; KHAYYAT, G. E., *Syro-Orientalis, seu Chaldaei Nestoriani et Romanorum Pontificum primates*. - Romae, 1870.

48 [MINGANA, A.], *Commentary of Theodore of Mopsuestia on the Nicene Creed*. - (Woodbrooke Studies: ասորերեն, արաբերեն և գարշունի լեզուներով քրիստոնեական վավերագրեր. թարգմանությունն ու խմբագրումը՝ քննադատությամբ հանդերձ՝ Alphonse Mingana, Vol. V). - Cambridge: Heffer & Son Ltd., 1932; Տե՛ս նաև [MINGANA, A.], *Commentary of Theodore of Mopsuestia on the Lord's prayer and on the Sacraments of Baptism and Eucharist* (Woodbrooke Studies: քրիստոնեական վավերագրեր. թարգմանությունն ու խմբագրումը՝ քննադատությամբ հանդերձ՝ Alphonse Mingana, ներածությունը՝ Rendel Harris. Vol. VI). - Cambridge: Heffer & Son Ltd., 1933.

սումնասիրության նոր խթան հանդիսացան: Սոգդերեն լեզվով քրիստոնեական նոր վավերագրեր հայտնաբերվեցին, եւ Արեւելքի եկեղեցու միսիայի պատմությունը նորից գրավեց գիտական աշխարհի ուշադրությունը<sup>49</sup>: Ավելին, Ծայրագույն Արեւելքում, մասնավորապես Չինաստանում Արեւելքի եկեղեցու ծավալման մասին վկայությունների կուրսակումը հնարավորություն տվեց նախնական եզրահանգումներ անելու: Այս ծավալում ու ընդարձակ նյութը համակարգվեց եւ հրատարակվեց ճապոնացի գիտնական Յոշիրո Սանկիի կողմից<sup>50</sup>: Մեր աշխարհային համար հարկապես արժեքավոր են արեւելյան վավերագրերի նրա՝ դավանաբանական վերլուծության փորձերը: Ծայրագույն Արեւելքի կրոնական համակարգերի ուսումնասիրությանը նվիրված հեղափոխական աշխարհային աշխարհային հիմնականում բացահայտեցին դրանց հետ Արեւելքի եկեղեցու միասնությունների գաղափարաբանական համագործակցության գործընթացը:

Ոչ պակաս թվով ուսումնասիրություններ հրատարակվեցին նաեւ արեւելաստրական միսիայի մեկ այլ արդյունք հանդիսացող Նեղկաստանի քրիստոնեության վերաբերյալ: Սակայն աստվածաբանական հայացքների զարգացման ուսումնասիրության տեսակետից դրանք այդքան էլ արժեքավոր չեն:

Գիտական մեթոդաբանության եւ միջոցների զարգացումը կրկին ու կրկին ստիպում էր գիտնականներին՝ վերադառնալու արդեն հայրենի անուններին ու նյութերին՝ վերհանելով պատմական եւ աստվածաբանական մանրամասնություններ, սրելով եւ այդ եկեղեցու ավանդության ներկայացուցիչների հայացքների եւ եկեղեցական ավանդության առավել ամբողջական պատկերը: Այսպիսով, Ի. դարն ամբողջությամբ անցավ նեղ մասնագիտական ուսումնասիրությունների հրատարակումով:

Այս ընթացքում Արեւմուտքում արտագաղթի արդյունքում սկսում են ընդարձակվել արեւելաստրական համայնքները: Արեւմտյան աշխարհը նորից հանդիպեց արեւելաստրական ավանդությանն՝ այս անգամ արդեն իր իսկ փարածքում: Նրա ավանդության մասին տեղեկություններ կարելի էր այլևս ստանալ ուղղակի կերպով, առանց միջնորդության: Սրան հետևում է աստրական համայնքների կողմից հրատարակությունների շարքն Սփյուռքում: Լույս են տեսնում Մար Նարսայի քարոզների երկհատոր ժողովածուն<sup>51</sup>, Մար Արդիշո բար

49 СМЕРНОВА, О. И., *Согд. (К истории изучения страны и о задачах ее исследования)*.//ПС 21 (84), Л.: Наука, 1970, էջ 121-150; ХРОМОВ, А. Л., *Памятники согдийской, среднеперсидской, парфянской, бактрийской, новоперсидской письменности*.// Восточный Туркестан в древности и раннем средневековье. Этнос. Языки. Религии./ իմր.՝ Б. А. Литвинский: Տաջիկստանի ՍՍՀ ԳԱ-ի ակադեմիկոս, - Մ., 1992, գլ. 8, էջ 271-306:

50 SAEKI, Yoshiro, P., *The Nestorian Documents and Relics in China.* /by P. Y. Saeki, D. Litt. - 1937; Բ. հրատ. Tokyo: Maruzen, 1951..

51 NARSAL, *Homilies*. 2 vols. - San Francisco: Patriarchal Press, 1970.

Բերիխա Մծբնեցու «Մարգարիտ» երկի՝ կաթողիկոս Մար Իշա Միմխուն ԻԳ-ի կողմից իրականացված անգլերեն թարգմանությունը<sup>52</sup>:

Վարդապետական փոխըմբռնման պեսակերից հարկապես կարևոր է աստվածաբանական երկխոսությունը, որը կազմակերպվել էր Pro-Oriente խորհրդակցական կենտրոնի կողմից: Այն ի վերջո բերեց 1994 թ. կաթողիկոս-պապրիարք Մար Դինխա Դ.-ի և Նոմի պապ Նովիաննես-Պողոս Բ.-ի միջև «Ընդհանուր քրիստոսաբանական հռչակագրի» ստորագրմանը, որի բուն պրեքս-պը կազմվել էր ասորերեն<sup>53</sup>: Նիմնական աստվածաբանական հարցերի շուրջ երկխոսությունները շարունակվում են<sup>54</sup>:

Պակաս կարևոր չէ նաև արեւելաստրական եկեղեցու պատմության և ավանդության ուսումնասիրության դիտարկումը ռուս գիտական շրջանակներում<sup>55</sup>:

Ռուսաստանը և Արեւելքի եկեղեցին պատմության մեջ հանդիպել են ընդամենը մի քանի անգամ: Առաջինը, որ կրում է զուտ պեսական բնույթ, կարելի է համարել այն պարկերացումն Արեւելքի ու արեւելքցիների վերաբերյալ, որ ռուսները ժառանգեցին բյուզանդացիներից սրացած քրիստոնեական մկրտությանը: Այսպէս կարևոր է շեշտել նաև ասորական եկեղեցու հայրերի՝ Նակոր Մծբնեցու և Եփրեմ Ասորու, նաև պարսից նահապակների ու վկանների մասին երկերի առկայությունը ռուսերենով, ինչպես նաև նեստորականության մասին պարկերացումները:

52 O'DISHOO, Mar, *Metr. Of Suwa (Nisibin) and Armenia, The book of Marganiitha (The Pearl) on the Truth of Christianity*: Թարգմանությունը, համապատասխան հաստատվածների վերաբերյալ հայրաբանական մեջբերումները, Արեւելքի եկեղեցու պատրիարքների անվանացանկն ու սուրբգրային և եկեղեցական բնույթի գրվածքների ցանկը՝ H. H. Mar Eshai Shimun XXIII, Արեւելքի եկեղեցու կաթողիկոս-պապրիարք; - Ernakulam (Kerala): Mar Thomeotheus Memorial Printing & Publishing House Limited, [1965]. (Վերատպ.՝ Chicago: The Literary Committee of the Assyrian Church of the East, 1988); Հմնն. Voice from the East - ܘܘܟܘܢܘܢ ܘܘܟܘܢܘܢ, Vol. 8, No. 2 (April/June), 1989, էջ 15:

53 29 հունվարի 1998-ով թվագրված՝ Բեռնար Դյուպյուրի մասնավոր նամակը՝ վերոնշյալ հռչակագրի ասոր. բնագիրը// The Messenger (ܘܘܟܘܢܘܢ), Issue Number 11, Մարտ 31, 1995, էջ 43-45:

54 *Syriac Dialogue I-IV*. First-fourth Non-Official Consultation on Dialogue within the Syriac Tradition. - Vienna: Pro Oriente, 1994-2001.

55 Հայ իրականության մեջ առաջին անգամ ասորագիտության, և մասնավորապես նեստորական կամ Արեւելքի եկեղեցու պատմության ոլորտում կատարած իր նշանակալի ուսումնասիրությամբ առանձնանում է Ե. Տեր-Մինասյանը, որի հրատարակած հոդվածներն ու մենագրությունը, փաստորեն, հիմք հանդիսացան հայ իրականության մեջ ասորագիտական հոսանք ձևավորելու համար (Ե. Տեր-Մինասյանի գիտական ժառանգության մասին տես Կ. Յուզբաջյան, «Երվանդ Տեր-Մինասյանի գիտական ժառանգությունը (Մննդյան 100-ամյակի առթիվ)» Պատմա-բանասիրական հանդես 1 (1979), էջ 87-95): Սակայն խորհրդային կարգերի հաստատումով, այդպես էլ հնարավոր չեղավ ասորագիտությունը և մասնավորապես հայ դավանաբանական մտքի պատմության համար այդքան կարևոր՝ Արեւելքի ասորական եկեղեցու աստվածաբանության ուսումնասիրությունը հասցնել պատշաճ գիտական մակարդակի: Հետագայի հայ ասորագետ մասնագետները (Լ. Տեր-Պետրոսյան, Հ. Մելքոնյան) ավելի շատ ուսումնասիրեցին հայ-ասորական հարաբերությունների գիտական կարևոր ոլորտը (ծնթ. թրգմն.):

Երկրորդ հանդիպումը տեղի է ունեցել քիչ ավելի ուշ, ավելի իրական հիմքի վրա, երբ ռուսները ծանոթացան մոնղոլներին, որոնց մի մասը հարում էր նեստորականությանը: Սակայն եկեղեցական որևիցև հարաբերության մասին վկայություն չի պահպանվել: Այս առումով արված փոքրածավալ ուսումնասիրությունները հիմնված են գուշակումների վրա<sup>56</sup>: Նիշապարսկության արժանի են ռուս հնաձիսական համայնքներում տարածված «Բելովոդյեյի» մասին լեգենդները, որոնք տեղեկության իմաստով որևէ կարևորություն չեն ներկայացնում մեր նյութի համար: Ասիայում ասորալեզու քրիստոնյաների գոյության մասին տեղեկություններում կարելի է գտնել պատմական հենք ունեցող դրվագներ, որոնք հավկապես կարևոր են պատմագիտական տեսակետից:

ԺԸ. դարում, աստվածաշնչագիրական ուսումնասիրությունների շրջանակներում տարերային փորձեր էին արվում «ասորաքաղղեական լեզուների» դասավանդման ուղղությամբ: 1703 թ. իր դպրոցը բացեց բողոքական երեց Ի. Է. Գյուլը (1652-1705), որի ղեկավարությունը որոշ ժամանակ շարունակեց Յոհան Վերներ Պաուզեն (1670-1735)<sup>57</sup>: Այս բոլոր դասընթացները, սակայն, ունեին գուր բանասիրական բնույթ:

Ինչպես Արևմուտքում, Ռուսաստանում նույնպես մանրամասն, նպատակաուղղված պատմական ուսումնասիրություններ սկսվեցին գաղութարարական քաղաքականության շրջանում: 1828 թ. ռուսական զորքերի՝ Ուրմիա ժամանելուց հետո լուրեր տարածվեցին, որ այստեղ նախապարաստվելու է Ռուսական հատուկ առաքելության (միսիայի) բացումը: Այս իրադարձություններով էր մասնավորապես ներշնչված Պալլադիոս Վարդապետի (Կաֆարով), ով նաև Չինական հատուկ առաքելության մասնակիցներից էր, աշխատությունը՝ «Քրիստոնեության հնագույն հետքեր Չինաստանում չինական սկզբնաղբյուրների համաձայն» (1870 թ.):

Մեմիրեչիեյի հայրնագործությունները և դրանց հետևած իրադարձությունները (1898 թ. մարտի 25-ին ասորանեստորականների միացումը Ռուս Օրթոդոքս եկեղեցուն) Արևելքի եկեղեցու ավանդության նկատմամբ հետաքրքրության նոր թափ ու ալիք առաջ բերեցին: Սկսեցին լույս տեսնել աշխատություններ, որոնք մասնավորապես նվիրված էին արևելա-ասորական քրիստոնեության պատմությանը:

<sup>56</sup> ВЕРНАДСКИЙ, Г. В., *К вопросу о вероисповедании монгольских послов 1223 года.* / VERNADSKY, G., *Were the Mongol envoys of 1223 Christians?!* // Сборник статей по археологии и византиноведению, издаваемый семинарием имени Н. П. КОНДАКОВА, III. (SEMINARIUM KONDAKOVIANUM. Recueil d'études. Archéologie. Histoire de l'art. Études byzantines) - Прага (Prague): Seminarium Kondakovianum, 1929, էջ 145-148; ГУМИЛЕВ, Л. Н., *В поисках вымышленного царства.* - М.: Наука, 1970; ibid. - СПб: Абрис, 1994.

<sup>57</sup> КРАЧКОВСКИЙ, И. Ю., *Очерки по истории русской арабистики.* - М.-Л.: Изд.-во АН СССР, 1950, էջ 44:



մուրթյանը<sup>58</sup>, դեպի Արևելք նրա փարածմանը<sup>59</sup>, Անպիոթյան դպրոցի մեկնողական արվեստին ու աստվածաբանությանը<sup>60</sup>: Ճիշտ է, ցարական գրաքննությունը շատ լայն հնարավորություններ չէր տալիս մասնավորապես աստվածաբանական հեղափոխությունների համար, սակայն պատմաբաններն ու արևելագետներն այդ առումով իրենց բավական ազատ էին զգում:

1917 թ. մի գրաքննությունը փոխարինվեց մյուսով, եւ արդյունքում աստվածաբանական հեղափոխությունները դարձան անհնարին ու անիրագործելի: Ասորական ավանդության ուսումնասիրությունը շարունակվում էր Ն. Վ. Պիգուլևսկայայի շնորհիվ (1894-1970)<sup>61</sup>, որը ժամանակին եղել էր Պ. Կ. Կոկովցովայի (1861-1941) եւ Ա. Պ. Ալյավդինայի (1885-1965) աշակերտը: Ինչ վերաբերում է աստվածաբանական մտքի պատմության ուսումնասիրությանը, այն հիմնականում ընթանում էր արևմտյան հրապարակումների գծած ճանապարհով: Այդպիսի ընդօրինակումներն այդքան էլ արդյունավետ չէին կարող լինել: Այս ամենին զուգահեռ շարունակվում էին Միջին Ասիայում իրականացվող չափազանց արժեքավոր հնագիտական պեղումները, որոնց արդյունքները նույնպես շատ քիչ բան կարող էին փալ դոգմայի պատմության ուսումնասիրությանը (Dogmengeschichte):

Էմիգրացիայում գրվվող ռուս աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչների հեղափոխությունները բռնել էին իրենց արևմտյան գործընկերների ուղին. այսպեղ նույնպես սրեղծվում են մի քանի նմանապիպ աշխարհություններ՝ նվիրված հիմնականում եկեղեցական պատմությանն ու դոգմայի պատմությանը:

58 МАЛОМА, Я., *Несториане и округ Хеккари*.// Известия Кавказского отдела Императорского Русского географического общества (ИКО ИРГО) (Тифлис), т. 2, No. 4, 1873, էջ 152-166; СОФОНИЯ (СОКОЛЬСКИЙ), еп. Туркестанский [и Ташкентский], *Современный быт и литургия христиан инославных иаковитов и несториан с кратким очерком их иерархического состава, церковности, богослужения и всего, что принадлежит к отправлению их церковных служб, особенно же их литургии...* - СПб, 1876; БОЛОТОВ, В. В., *Из истории Церкви Сиро-Персидской*. - СПб : Типография А. П. Лопухина, 1901; Райт, В[ильям], *Краткий очерк истории сирийской литературы*; անգլ. թրգմն.՝ К. А. Тураев, գլխավոր խմբ.՝ П. К. Коковцова. - СПб, 1902.

59 Տե՛ս ПАНТУСОВ, (Բ. հրատ.), 1886; Տե՛ս ХВОЛЬСОН, 1886, 1890; Տե՛ս ЛЮТОВ, 1886; Տե՛ս ЯДРИНЦЕВ, (Բ. հրատ.), 1886; Տե՛ս НИКОЛЬСКИЙ, 1888; Տե՛ս RADLOFF, 1888; Տե՛ս СЛУЦКИЙ, 1889-1891; Տե՛ս БАРТОЛЬД, (Բ. հրատ.), 1893; Տե՛ս КОРИШ, 1893; Տե՛ս նաեւ КОКОВЦОВ, П. К., *Несколько новых надгробных камней с христианского-сирийскими надписями из Средней Азии*.// ИАН, Сер. VI, т. 1, No. 12. - СПб, 1907, էջ 427-458; Mélanges asiatiques, tires du Bulletin de l'Académie Impériale des sciences de St.-Petersbourg (MA), t. 13, 1908, էջ 41-72:

60 СОКОЛОВ, П., *Толкование ветхозаветных писаний в антиохийской школе*.// Чтения в Обществе Любителей Духовного Просвещения (ЧОЛДП), 1887; Տե՛ս նաեւ ГУРЬЕВ, Петр, *Феодор, еп. Мопсуестский*. - Москва, 1890; Տե՛ս նաեւ ГЛУБОКОВСКИЙ, Н. Н., *Блаженный Феодорит, епископ Киррский, Его жизнь и литературная деятельность*. 2 тома. - Москва, 1890.

61 Ն. Վ. Պիգուլևսկայայի տպագրված աշխատությունների ամբողջական ցուցակը, տե՛ս՝ ПИГУЛЕВСКАЯ, Н. В., *Ближний Восток. Византия. Славяне*. - Л., 1976, էջ 50-62 կամ// Աթոս (Հայրենիք) - ՌՆՆԸ No. 6/1996, СПб - Чикаго, էջ 19-21:

նր, որպեղ երբեմն-երբեմն ներառվում էին անտիոքյան եւ միջագետքյան ավան-  
դություններին նվիրված բաժիններ<sup>62</sup>:

### Ափրահատ

(270/285-345)

Ափրահատի ճառերը կամ «**gnjgp**»-երը (ՌՃԼՈՎՅՏ - takhviyata)<sup>63</sup> ասորերե-  
նից հայերեն են թարգմանվել արդեն Ե. դարի վերջին՝ իբրև հեղինակ ընդու-  
նելով Ս. Հակոբ Մծբնեցուն: Հենց այս հեղինակային պատկանելությամբ կար-  
դինալ Նիկոլո Անտոնելլին 1756 թ. հրատարակեց հայերեն գրաբար տեքստը՝  
լատիներեն փոխադրություն-թարգմանությամբ<sup>64</sup>: 1869 թ. պրոֆեսոր Ուիլյամ  
Ռայթն Ափրահատի քսաներեք ճառերը հրատարակեց Լոնդոնում<sup>65</sup>: Դրանցից  
առաջին տասը գրված են նամակի տեսքով եւ թվագրվում են համապատաս-  
խանաբար 336-337 թթ., մնացած տասներկուսը, նախորդների հետ միացած  
լինելով այբբենական կարգով, թվագրվում են 343-344 թթ., իսկ վերջինը՝ 345 թ.  
օգոստոսով:

Ափրահատի երկում առկա չէ քրիստոսաբանական համակարգված ուս-  
մունք: Ակնհայտ է, որ դրանց հեղինակը պատկանում է արամեախոս եկեղե-  
ցու ուսմունքի զարգացման այն վաղ շրջանին, երբ կապը հունա-լատինական  
քրիստոնեական աշխարհի հետ գրեթե իսպառ բացակայում էր<sup>66</sup>: Իգնասիո Օր-  
տից դե Ուրբինայի (Ignatio Ortiz de Urbina) եւ Արթուր Վոօբուսի (Arthur Vööbus)  
ուսումնասիրություններից, այնուամենայնիվ, պարզ դարձավ, որ Ափրահատի  
երկում կարելի է թերեւս մի քանի քրիստոսաբանական եզրահանգում առանձ-  
նացնել: Սակայն դրանք չեն բխում համակարգված վկայություններից, դրանց

62 **ФЛОРОВСКИЙ, Г. В.**, *Восточные отцы IV века.* – Париж, 1931 (Վերատպ.՝ Մ., 1992); Տե՛ս նաեւ **ФЛОРОВСКИЙ, Г. В.**, *Византийские отцы V-VIII [веков].* – Париж, 1933 (Վերատպ.՝ Մ., 1992); **КАРТАШЕВ, А. В.**, *III-й Вселенский Собор.*// **КАРТАШЕВ, А. В.**, *На путях к Вселенскому Собору.* - Paris: YMCA PRESS, 1932, էջ 72-140. - Материал целиком включен в: **КАРТАШЕВ, А. В.**, *Вселенские Соборы.* - Мадрид, 1963; *ibid.* - М.: Республика, 1994; **БУЛГАКОВ, Сергей Н.**, *прот., Агнец Божий.* (О Богочеловечестве, Ч. 1) - Париж: YMCA-Press, 1933; *ibid.* – М.: Ун-т осн. прот. **А. Менем**, 2000: Հայ իրականության մեջ Արեւելքի քրիստոնեական եկեղեցուն նվիրված ուսումնասիրությունները գերազանցապես հանդես էին գալիս իբրև հայ-ասորական հարաբե-  
րությունների ուսումնասիրությունից աճանցված իրողություններ:

63 Օտ ՌՃԼՈՎՅՏ՝ «ցույց տալ», «բացահայտել»: Երբեմն այն թարգմանվում է «ցուցադրում»,  
ինչպես նաեւ «քարոզ» իմաստներով:

64 Տե՛ս **ANTONELLI**, 1756, 1765.

65 **WRIGHT, W.**, *The Homilies of Aphraates the Persian Sage*, Բրիտանական թանգարանում  
պահվող Ե. եւ Զ. Դարերի ասոր. Ձեռագրերի հիման վրա կատարված հրատարակություն, Lon-  
don, 1869.

66 **BURKITT, F. Crawford**, *Early Christianity Outside the Roman Empire.* - Cambridge: CUP, 1899. Comp.: *idem*, *Early Eastern Christianity Outside the Roman Empire.* St. Margaret's Lectures on the Syriac Speaking Church.- London: **John Murray**, 1904; Deut.: *Urchristentum im Orient.*/ Deutsch von **E. Preuschen.** - Freiburg, 1907.

մեջ առկա չէ Քրիստոսի աստվածության մասին Նիկիայի ժողովում ձեռակերպված հստակ պատկերացումը. ի դեպ, Ափրահատը երբեք չի նշում Նիկիայի ժողովի մասին: Նրա երկերում բացակայում են Ա Տիեզերածոյի «Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՛» եւ «համագոյ Հօր» դավանաբանական սահմանումները: Ափրահատը Քրիստոսին անվանում է Աստված<sup>67</sup>: Բայց դրանով նա իր քննադատական սլաքն ուղղում է ոչ թե արիոսականների, այլ հրեաների դեմ, ովքեր քրիստոնյաների դեմ իրենց հիմնական մեղադրանքը ձեռակերպում էին հետեւյալ կերպ. «Դուք երկրպագում ու ծառայում եք մարդու, ով ծնվեց եւ խաչվեց, եւ դեռ դուք մարդու որդուն Աստված եք համարում, եւ չնայած Աստված ոչ մի որդի չունի, դուք ասում եք, թե այդ խաչյալ Հիսուսն Աստծո Որդին է՞»<sup>68</sup>: Իր «Ցոյցք»-ի մեջ, Մար Ափրահատը, դիմելով հավատակից եղբայրներին, այս մեղադրանքին պատասխանում է. «Սիրելիներ, սրան ի պատասխան ես ձեզ ցույց կտամ, որչափ կների իմ աննշան կարողությունը, թե երբ մենք գիտակցում ենք Նրա՝ Աստվածորդի լինելը եւ միաժամանակ անվանում նրան Աստված (ԹճԹ - Ալահա) եւ Տեր (Թ՛՛՛ - Մարյա), ոչ մի արտասովոր բան չենք անում, եւ նրան ոչ մի արտասովոր անուն չենք տալիս, որը նրանք (հրեաները) չէին օգտագործի: Մեզ համար, իհարկե, կասկածից դուրս է, որ Հիսուս՝ մեր Տերը, Աստված է (ԹճԹ), Աստծո Որդի (ԹճԹ ՛՛ - Բար Ալահա), ունի Թագավոր ու Թագավորորդի, Լույս՝ Լույսից, Արարիչ (Թ՛՛՛ - բարե) եւ Խորհրդակից, Առաջնորդ եւ Ճանապարհ, Փրկիչ եւ Հովիվ, Համախմբող եւ Դուռ, Մարգարիտ եւ Լապտեր, եւ դեռ շատ այլ անուններ, որոնցով նա կոչվում է: Թողնենք հիմա դրանք մի կողմ եւ ապացուցենք, որ Նա՝ Աստծուց եկածը, Աստծո Որդին է եւ Աստված»<sup>69</sup>:

Իր հետագա վերլուծությունների մեջ Ափրահատը, բազմաթիվ սուրբգրային համարներ մեջբերելով, ցույց է տալիս, որ քրիստոնյաների վկայությունները լիովին համահունչ են աստվածաշնչյան ոգուն ու տառին: Աստված գործում է Փրկագործության պատմության մեջ, եւ Նրա գործիք են դառնում մարդիկ, ազգեր ու թագավորներ: Իր գործերը նրանց միջոցով իրականացնելով՝ Աստված նրանց անուններ է տալիս այնպես, որ տեսանելի է դառնում կապը նրանց եւ աստվածային նախախնամության միջեւ: Հետեւաբար, մի՞թե արդար չէ, որ Քրիստոս Մեսիան՝ իբրեւ Աստծո Որդի, Աստծո բարձրագույն արտահայտում, իբրեւ Աստված, արժանի դառնա այդ անունները կրելու գերազանցությանը: Ըստ ինքյան այդ անունների ու պատկերների գործածությունը չպետք է առարկություն առաջ բերի (հմմտ. Հովի. 10:33-36), բայց հակառակ պարագային արդեն Ափրահատն անմիջապես դիմում է շատագովության: Այդ բոլոր անուններն

67 Ցոյցք ԺԷ, 2; Տե՛ս **PARISOT**, հուն. I - 1894, հուն. II - 1907.

68 Ցոյցք ԺԷ, 1; Տե՛ս նույն տեղում:

69 Ցոյցք ԺԷ, 2; Տե՛ս նույն տեղում:

ու պատկերները պատշաճում են Քրիստոսին, եւ սա ամենագլխավորն է, սա՛ է պետք ապացուցել, քանի որ դրա մեջ է Քրիստոսի յուրահատկությունը եւ լրումը: Եթե արդարների համար գործածվում է աստվածային անվանում, Իսրայելն ստանում է «անդրանիկ» կոչումը, հեթանոս տիրակալ Նաբուգոդոնոսորն անվանվում է արքայից արքա, մարդու արարումը ծագում է Արարչի մտքից, ապա Քրիստոս առավել եւս արժանի է կոչվելու Աստված, Թագավոր, Որդի եւ Անդրանիկ<sup>70</sup>: Ահա այսպիսին է Ափրահատի մեկնողական տիպաբանությունը:

Հունահռոմեական ավանդության ուշ շրջանի ընթերցողի համար Ափրահատի որոշ արտահայտություններ կարող էին թվալ «Քրիստոսի աստվածության ոչ այդքան հստակ դավանանքի» արտահայտություններ<sup>71</sup>: Այսպես, օրինակ, Մար Ափրահատը Հակոբի տեսիլքի սանդուղքը համեմատում է խաչյալ Քրիստոսի հետ, որի փրկարար Խաչը միավորում է երկինքն ու երկիրը: Առաքյալի հետեւողությամբ նա գրում է. «Իսկ Քրիստոսի գլուխն Աստված է» (հմմտ. Ա Կորնթ. 11:3)՝ ակնարկելով այդ տեսիլքի մեջ սանդուղքի գլխին կանգնած Աստծուն (հմմտ. Ծննդ. 28:12-13)<sup>72</sup>: Իրականում, սակայն, այստեղ առկա է Հայր Աստծո եւ Քրիստոսի՝ մարմնացած Բանն Աստծո միջեւ տարբերության ընդգծման նախնական սկզբնաղբյուրը, որը հետագայում դառնալու է Արեւելքի Եկեղեցու ավանդության հիմքը<sup>73</sup>: Ափրահատի համար Քրիստոս հավիտենական Աստծո մարմնացած – մարդեղացած Որդին է: «Հարուստ լինելով՝ նա ինքն իրեն աղքատացրեց, բարձրացած լինելով՝ նա իր մեծությունը զայթակրություն չհամարեց, իրեն բնակարան ունենալով երկինքը՝ տեղ չունեց գլուխը դնելու, ամպերի վրա քայլողը ավանակի վրա նստեց եւ այդպես մտավ Երուսաղեմ, Աստված եւ Աստծո Որդի լինելով՝ իր վրա ծառայի կերպարանք առավ»<sup>74</sup>:

Ընդ որում, հենվելով նորկտակարանյան արտահայտությունների վրա (Հռոմ. 8: 9, 11; Փիլիպ. 1: 19)՝ Ափրահատը Մարդեղությունը եւ Փրկագործու-

70 Ցոյցը ժէ; Տե՛ս նույն տեղում:

71 **GRILLMEIER, Aloys, S. J.**, *Christ in Christian Tradition. Vol. I: From the Apostolic Age to Chalcedon (451)*. – London: A. R. Mowbray & Co Ltd., 1965; Բ. Վերանայված հրատարակություն, թրգմն.՝ **John Bowden**. – Atlanta: John Knox Press, 1975, էջ 215; Vol. 2: *From the Council of Chalcedon (451) to Gregory the Great (590-604)*; Part I: *Reception and Contradiction. The Development of the Discussion about Chalcedon from 451 to the beginning of the reign of Justinian.* / Թրգմն.՝ **Pauline Allen & John Cawte**. – London & Oxford: Mowbray, 1987; Part 2: *The Church of Constantinople in the Sixth Century*. – London, Louisville (Kentucky): Mowbray, WJK, 1995.

72 Ցոյցը Դ, 5; Տե՛ս **PARISOT**, հուն. I - 1894, հուն. II – 1907.

73 Իր թղթերից մեկում կաթողիկոս Մար Գիվարգիս Կաֆրիացին հետագայում գրել է. «Քրիստոս Աստված է, սակայն, իսկապես, երբ մենք ասում ենք «Աստված», ոչ մի դեպքում չենք նույնացնում «Քրիստոսի» հետ, քանզի Հայրը Աստված է, բայց «Քրիստոս» չէ եւ Սուրբ Հոգին էլ է Աստված, բայց «Քրիստոս» չէ, եւ չնայած որ մենք տեսնում ու ճանաչում ենք Քրիստոս Մարդուն, սակայն միեւնույն ժամանակ հավատում ու դավանում ենք, որ Նա Աստված է, քանզի Բանն Աստծոն Նրան Իր մեջ ընդունեց եւ Նրան Իրեն միացրեց անբաժանելի միությանը եւ Իր համար հավիտենական բնակարան դարձրեց»:

74 Ցոյցը Զ, 9; Տե՛ս **PARISOT**, հուն. I - 1894, հուն. II – 1907.

թյան ողջ տնօրինությունն ընկալում է իբրև Աստծո գործ, որի մեջ գործում են նաև Որդին, նաև Սուրբ Հոգին: Ընդամին, Ափրահատը Մարդեղությունը եւ մեր փրկությունը նկարագրում է իբրև մեկ ընդհանրական խորհրդական իրականություն. «Մենք, սիրելիներս, նաև ընդունել ենք Քրիստոսի Հոգին, եւ Քրիստոս բնակվում է մեր մեջ ... Մի՛ վշտացրեք Սուրբ Հոգուն, որի միջոցով եւ ձեռքով դուք կնքվել եք քավության օրվա համար, որովհետև Մկրտության ժամանակ ընդունում են Քրիստոսի Հոգին: Այն պահին, երբ քահանան վերակոչում է Սուրբ Հոգուն, երկինքը բացվում է, եւ Նա իջնում ու շրջում է ջրերի վրա: Մկրտվողներն զգենում են այն... Մկրտության միջոցով երկրորդ ծնունդի մեջ նրանք ընդունել են Սուրբ Հոգուն իբրև աստվածության մի մասնիկ եւ այլևս ենթակա չեն մահվան»<sup>75</sup>:

Ափրահատի քրիստոսաբանությունն անբաժանելի է քրիստոնեական կյանքի վերաբերյալ նրա վերախմաստավորումից: Քրիստոս իր կյանքով, մահվամբ, Հարությանբ, Համբարձմամբ եւ Սուրբ Հոգու բարեխոսությամբ Աստծո հետ Նոր Ուխտ է հաստատում, եւ ուխտի ուստրերն ու դուստրերը (كلمة الله) իրենց կյանքով ներգրավվում են շարունակական փրկագործության ընթացքի մեջ:

Քրիստոսաբանական մտքեր ներկայացնող արտահայտություններն ու պատկերները Ափրահատի կողմից նույնացվում են քրիստոնեական կենցաղի էությունը նկարագրողների հետ: Այսպես, օրինակ, մարդեղության համար իբրև օրինակ ծառայող զգեստավորումը, որն ի դեպ արամերենում կիրառվում է ամենատարբեր իրողություններ նկարագրելու համար եւ հետագայում դարձավ Արելեյքի Եկեղեցու աստվածաբանական լեզվամտածողության առանձնահատկությունը, Ափրահատի գրչի տակ որպես հոմանիշ է գործածվում՝ նկարագրելու համար Մկրտությունն իբրև Քրիստոսով եւ Սուրբ Հոգով զգեստավորվելու երեւույթ<sup>76</sup>, եւ կամ հարությանբ հավերժական լույս հագնելու օրինակ<sup>77</sup>:

«Հալածվող Հովսեփը, - գրում է Ափրահատը, - հալածվող Հիսուսի նախօրինակն էր: Հովսեփի հայրը նրան գույնզգույն պատմունճան հագցրեց, Հիսուսի Հայրն էլ նրան մարմին տվեց՝ Սուրբ Կույսից առնելով: Հովսեփի հայրը նրան բոլոր եղբայրներից ավելի էր սիրում, Հիսուս նույնպես իր Հոր թանկագին ու սիրված Որդին էր»<sup>78</sup>: «Քրիստոս՝ մահվան Հալածիչը, եկավ եւ Ադամի բնությանբ մարմին առավ, եւ այդ մարմնով իսկ խաչվեց ու մահը ճաշակեց»<sup>79</sup>:

75 Ցոյցք Զ, 14; Տեն նույն տեղում:

76 Ցոյցք Զ, 14; Տեն նույն տեղում:

77 Ցոյցք ԺԷ, 12; Տեն նույն տեղում:

78 Ցոյցք ԻԱ, 9; Տեն նույն տեղում:

79 Ցոյցք ԻԲ, 4; Տեն նույն տեղում:

Ինչպես որ Քրիստոս, Ադամի մարմինը հագնելով, իր մահվամբ նրան փառավորեց Հարությանը, այդպես էլ հարություն առած հավատացյալները «երկնային մարմին ու հոգեւոր պատկեր կհագնեն»<sup>80</sup>:

Բանի՝ մարդկության մեջ բնակվելը եւ հայտնվելը, Ափրահատի համաձայն, անքակտելիորեն կապված է Աստծո՝ իր արարչության մեջ բնակվելու եւ արդարների մեջ «հայտնվելու» խորհրդի հետ:

Մեկը բխում է մյուսից, եւ սա էլ Ափրահատի «ասկետիկ, ճգնակեցական քրիստոսաբանության» հիմքն է: «Երբ Գաբրիելը բարի լուրն ավետեց Ամենօրհնյալ Մարիամին, Բանը երկնքից խոնարհվեց, եկավ եւ դարձավ մարմին ու բնակվեց մեզ հետ: Իսկ երբ Նա վերադարձավ իրեն ուղարկողի մոտ, Իր հետ տարավ այն, ինչ չէր բերել, ինչպես ասում է առաքյալը. «Նա մեզ բարձրացրեց եւ Իր հետ նստեցրեց երկնքում» (Եփես. 1: 19-20): Եվ երբ Հոր մոտ գնաց, մեզ ուղարկեց Սուրբ Հոգուն եւ ասաց. «Ես ձեզ հետ եմ մինչեւ աշխարհի վախճանը»: Քանզի Քրիստոս նստում է իր Հոր աջ կողմում՝ բնակվելով, սակայն, մարդկանց մեջ»<sup>81</sup>:

«Քրիստոսի Հոգին բնակվում է ձեր մեջ: Մեր Տեր Աստված ասել է. «Ես եւ Հայրը մի ենք»: Ահա թե ինչու խոսքն իր լրումին հասավ, եւ Քրիստոս ապրում է մարդկանց մեջ, եւ հատկապես նրանց մեջ, ովքեր հավատում են նրան, քանզի Նա է հիմքը, որի վրա կառուցվում է ամբողջ շենքը»<sup>82</sup>:

Մարդկության կամ Ադամի տան ու սերնդի մեջ (آدم ۱۰۰)<sup>83</sup> բնակվելն Աստծո ամենանախնական տնօրինությունն էր: Ափրահատը շեշտում է Աստծո՝ մարդու մեջ եւ մարդու՝ Աստծո մեջ բնակվելու պարադոքսալ փոխադարձությունը՝ իրար կապելով Աստված – մարդ փոխհարաբերություններն անկումից առաջ եւ դրա վերականգնումից հետո, ինչն ապրում է Եկեղեցին իր միասնիկ փորձառության մեջ:

Մարդուն իր պատկերի համաձայն ստեղծելով՝ Աստված նրան ամբողջ արարչությունից ավելի վեր է դասում եւ դարձնում իր բնակության վայրը: «Ահա թե ինչպիսին է հավատը, - գրում է Ափրահատը, - երբ մարդը հավատում է Աստծուն՝ ամենքի Տիրոջը, երկինքը, երկիրն ու ծովերը եւ դրանք լցնող արարածների Արարչին, ով մարդուն սիրելով, նրան իր պատկերի համաձայն ստեղծեց»<sup>84</sup>: «Տեսնք, թե ինչ մեծ է մեր Բարի Արարչի ողորմությունն ու սերը, որ Նա նույնիսկ մարդկանց համար Աստվածության, երկրպագության եւ Թագավորության անունը չխնայեց, քանզի Նա երկրի երեսին սիռված արարչության

80 Յոյցք Ը, 1; Տե՛ն նույն տեղում:

81 Յոյցք Զ, 10; Տե՛ն նույն տեղում:

82 Յոյցք Ա, 5; Տե՛ն նույն տեղում:

83 آدم - բեթ՝ «տուն» բառը նաեւ «տոհմ, ընտանիք» իմաստներն է արտահայտում:

84 Յոյցք Ա, 19; Տե՛ն PARISOT, հուն. I - 1894, հուն. II - 1907.

Հայրն է: Եվ Նա մարդկանց պատվեց, բարձրացրեց ու մեծարեց բոլոր արարածներից ավելի: Իր սուրբ ձեռքերով Նա ձեռն անցնելով նրանց եւ Իր Սուրբ Հոգին փչեց նրանց վրա՝ ի սկզբանե նրանց համար դառնալով օթեւան: Նա նրանց մեջ է բնակվում ու քայլում նրանց միջոցով, քանզի Նա ասաց մարգարեի միջոցով՝ «նրանց մեջ կբնակվեմ եւ նրանց միջով կքայլեմ» (Ղեստ. 26: 11-12; Եզեկ. 37: 27; Բ Կորնթ. 6: 16): Դարձյալ Երեմիա մարգարեն ասում է. «Դուք Աստծո տաճար կդառնաք, եթե ուղղեք ձեր ճանապարհները եւ գործերը» (Երեմ. 7: 4-5): Իսկ Դավիթն ասում է. «Դու Աստված, ապաստան ես մեզ սերնդեսերունդ (אֱלֹהֵינו - օթեւան, բնակարան): Նախքան կծնվեին լեռները, Դու ստեղծեցիր երկինքն ու տիեզերքը, եւ դարեդար Դու Աստված ես» (Սղմ. 89: 2-3)<sup>85</sup>:

Քրիստոսով զգեստավորվելու եւ մարդկային բնությունը Քրիստոսի կողմից պայծառակերպելու պատկերները նույնպես Ափրահատը փոխառել է Պոդոս առաքյալից: «[Առաքյալն] ասում է. «Ինչպես որ զգեստավորվել ենք այն Ադամի պատկերով, որը հողից էր, այնպես էլ պիտի զգեստավորվենք այն Ադամի պատկերով, որը երկնքից է: Քանզի հողից ստեղծված Ադամը մեղք գործածն է, իսկ երկնավոր Ադամը՝ մեր Փրկիչը, մեր Տեր Հիսուս Քրիստոս: Իսկ Քրիստոսի Հոգին ընդունածները դառնում են երկնավոր Ադամի պատկերի համաձայն, որը մեր Փրկիչ Տեր Հիսուս Քրիստոսն է: Քանի որ կենդանականը պիտի կլանվի հոգեւորի կողմից, ինչպես արդեն գրել էի քեզ վերը»<sup>86</sup>:

Արեւելքի Եկեղեցու աստվածաբանական բառապաշարի զարգացման տեսանկյունից Ափրահատի կողմից իր աստվածաբանական ճառերի մեջ kyān (kyānā - كيان, كيان) եզրի ներմուծումը մեծ նշանակություն ունի: Եվ հատկապես պետք է այս առումով հիշել, որ Ափրահատը գրեթե ոչ մի կապ չունի հելլենիստական մշակութային աշխարհի հետ: Ըստ երեւոյթին, Ափրահատն այս բառը փոխառել է Նոր Կտակարանից եւ Սողոմոնի Մաղմոսներից: Հունարեն Նոր Կտակարանում պարբերաբար հանդիպող փոստի եզրը հետետողական թարգմանությունն է ասորերեն كيان - kyānā բառով: Ինչպես նշում է Ալբերտ Բլեյնը (A. F. J. Klijn)՝ «kyān բառն առաջացել է kūn բայից՝ «գոյություն ունենալ, լինել»: Այսպիսով, kyān բառն ուղղակի իմաստով նշանակում է «գոյություն, կեցություն, լինելություն»: ...kyān բառը «գոյություն» կամ «կեցություն» իմաստով, փոստ բառի շատ ճիշտ համարժեքն է: Վերջինս ծագում է փս- արմատից, որն ունի «լինել, գոյել» նշանակությունը եւ որը կարող է թարգմանվել ε΄ναι բայով»: Այս իմաստով Բլեյնը մատնանշում է փոստ բառի նշանակության բավական լայն շրջանակը: Նա նաեւ նշում է, որ Ափրահատի երկերի թարգմանիչները kyān եզրը ոչ միշտ են հետետողականորեն թարգմանել, եւ նրանցից յուրաքանչյուրի

85 Յոյցք ԺԷ, 6; Տե՛ն նույն տեղում:

86 Յոյցք Զ, 18; Տե՛ն նույն տեղում:

թարգմանական ընտրությունը կարող է տարբերվել մյուսներից: Այսպես, Գորգ Բերթը (Goerg Bert) այն թարգմանում է իբրև «բնություն» (natura)՝ միաժամանակ հաշվի չառնելով ոչ մի համատեքստային առանձնահատկություն: Ժ. Պարիզոն (J. Parisot) այն արտահայտում է «կացություն» (condicio), «իրավիճակ» (status) եւ «ձեւ» (sors) բառերի միջոցով: Ի. Օրտիս դե Ուրբինան առաջարկում է այնպիսի համարժեքներ, ինչպիսիք են «բնություն» (nature), «հատկություն» (property), «իրավիճակ» (state), «կյանքի եւ գոյության միջոց» (mode of being and life), «գործողություն» (action), «բնության գործունեության դաշտ» (sphere of nature): «Այսպիսի բառանշանակությունների համակարգը, սակայն, թարգմանում է պատկերների մի փոքր մասը միայն, որոնք ստեղծում է Ափրահատը kyān եզրի միջոցով», - գրում է Ա. Քլեյնը: Ոչ աստվածաբանական կիրառության մեջ Ափրահատի kyān եզրը երբեք չի նշանակում վերացական գոյություն: Այն ավելի շուտ արտահայտում է «էմպիրիկ իրողություն» կամ «մարդկանց կողմից նկատելի իրեր»<sup>87</sup>: Աստվածաբանական եւ հատկապես քրիստոսաբանական համատեքստում kyān-ը հաճախ օգտագործվում է խոնարհության, ծառայական կերպի հետ գուգահեռ, ինչպես նաեւ այն դրվագներում, որտեղ քննարկվում է Ա. Կորնթ. ԺԵ. գլուխը: «Այս ամբողջ խոնարհությունը մեր Փրկիչը ցույց տվեց իր օրինակով, - գրում է Ափրահատը: - Միրելիներ, ուրեմն խոնարհ լինենք: Երբ մեր Տերը դուրս եկավ իր բնությունից (الله جسد), մեր բնության մեջ քայլեց (جسد)...: ...Տերը մեզանից երաշխիք վերցրեց, երբ հեռացավ մեզանից եւ երբ համբարձվեց, իր կողմից մեզ երաշխիք թողեց: ... Այնպես որ այն, ինչ ստացանք նրանից, պետք է հարգենք, այն, ինչ մերն է, Նրա հետ միասին է փառավորվում, ով մեր բնության մեջ չէ: Հարգենք ուրեմն այն, ինչ Նրանն է՝ Իր իսկ բնության մեջ: Եթե պաշտենք Նրան, Նրա մոտ կգնանք, ով իր վրա վերցրեց մեր բնությունից եւ այդպիսով համբարձվեց: Իսկ երբ չպաշտենք, անտեսենք Նրան, մեզանից կվերցնի եւ այն, ինչ մեզ տվել է: Երբ Նա մեզ մոտ եկավ, մեզանից ոչինչ չունեւ, եւ մենք էլ Նրանից ոչինչ չունեինք, չնայած երկու բնություն էր՝ Նրա ու Իր Հորինը, քանզի երբ Գաբրիելը բարի լուրը հայտնեց Ամենօրինյալ Մարիամին՝ Նրան կրողին, Բանը երկնքից խոնարհվեց ու եկավ, դարձավ մարմին ու բնակվեց մեր մեջ»<sup>88</sup>:

Փոստ էլ kyānā հասկացությունների սկզբունքային նմանության դեպքում էլ նույնիսկ գործածության ժամանակ դրանք էականորեն տարբեր են: «Հունարեն փոստ բառը, չնայած որ տարբեր է իր կիրառությանց մեջ, միշտ էլ հատկորոշաբար նպատակաուղղված է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի բնությունը սահմանելու հատկությանը: Արտացոլումներից բխում է այն անփոփոխ

87 Klijn A. F. J., "The Word k'jan in Aphraates," *Vigilia Christiana* 12 (1958), 59-61.

88 Յոյցք Զ, 10; Տնս **PARISOT**, հուն. I - 1894, հուն. II - 1907.



իրականությունը, որը մշտապես ներկայանում է արդեն հայտնված իրերով»<sup>89</sup>: kyān-ի պարագային այն պետք է սահմանել գոյության նկատմամբ սեմական մոտեցման շրջանակներում: «Ափրահատի մտածողության մեջ kyān-ը ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի գոյությունը սահմանվում է այնքանով, որքանով որ այն հայտնվում է մարդկանց»<sup>90</sup>: Այս ամենի շնորհիվ Ափրահատը հեշտությամբ է անցնում զուտ աստվածաբանական սահմանումներից քրիստոնեական գործնական բարոյականության հրահանգներին: Բացի այդ, kyān-ը Ափրահատի ընկալմամբ դինամիկ, շարժուն հասկացություն է: Այն ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի գոյությունն է, որ կարող է ենթարկվել ներգործության: «Հող դառնալն» ու «փառավորվելը» իրականություններ են, որոնք ներգործում են Ադամի ու Քրիստոսի մարմնականության վրա համապատասխանաբար ամենախորունկ կերպով այն աստիճան, որ մեկը (kyān) բնութենակից է մեղավոր Ադամին, մյուսն էլ՝ խոնարհ Քրիստոսին: Ըստ Ափրահատի՝ փառքը բնութենակից է Քրիստոսի (kyān) մարմնականությանը, որը Քրիստոս վերցրեց մեզանից, քանզի այն նաեւ բնութենակից է Որդուն, ով Հոր փառքից է եւ ընդունեց մեր մարմնականությունը<sup>91</sup>:

Ափրահատի այս վաղ շրջանի Քրիստոսաբանությունը, որը բխեցվում է ոչ թե փիլիսոփայական-աստվածաբանական խորհրդածություններից, այլ ավելի շուտ Վաղ Եկեղեցու հոգեւոր-ճգնակեցական փորձառությունից, հարստացնում է աստվածաբանության զարգացման չափազանց նշանակալից ժամանակաշրջանը, հատկապես քրիստոսաբանության շրջանակներում: Իր հիմնական բովանդակային իմաստով այն ավելի շատ ունի հետադարձ եւ ոչ թե ուղղադարձ հատկություն: Այնուամենայնիվ, Ափրահատի առաջ քաշած kyān կենտրոնական հասկացության շուրջ է ծավալվելու ողջ ասորական աստվածաբանությունը, իսկ նրա կողմից օգտագործված պատկերներն ու արտահայտությունները հիմնարար են դառնալու նրա՝ եկեղեցու աստվածաբանական բառազանձի մեջ:

### Մար Եփրեմ Սուրյայա (Եփրեմ Ասորի)

Եփրեմ Ասորին մեծապես հարգված եւ ընդունված եկեղեցական հայր է արեւելյան քրիստոնեության երեք մեծ ճյուղերի կողմից՝ «մելքիտներ», «հակոբիկյաններ» եւ «արեւելյան ասորիներ»: Եփրեմ Ասորու քրիստոսաբանական բառազանձի անորոշությունը եւ նրա ստեղծագործության բանաստեղծական - պարադոքսալ բնույթը թույլ է տալիս տարբեր հարանվանությանց ներկա-

89 A. F. J. Klijn, նշվ. աշխ., էջ 66:

90 Տե՛ս նույն տեղում:

91 Յոյցք Զ, 9-10; Տե՛ս PARISOT, հուն. I - 1894, հուն. II - 1907.

յացուցիչներին տեսնելու եւ շեշտելու նրա երկերի այն մասերը, որոնք հենց այդպիսով էլ դառնում են նրանց քրիստոսաբանական համակարգերի անկյունաքարեր: Շատ հաճախ մեջբերվում են Եփրեմ Ասորու ամենատարբեր չափաձո ստեղծագործություններից հատվածներ, բայց ամենից ավելի հաճախ՝ նրա նշանավոր «Բան ի Ծնունդն Քրիստոսի մարմնացելոյ» ճառը:

Ներկա ուսումնասիրության համար հատկապես կարելու է նշել, որ Եփրեմի ժառանգությունն ամբողջությամբ ընդունվում է Արեւելքի եկեղեցու կողմից եւ նրա ազդեցությունն այդ եկեղեցու աստվածաբանական համակարգի ու ծիսական կյանքի վրա հսկայական է:

Եփրեմ Ասորին ինքը երբեք չի մասնակցել հատուկ քրիստոսաբանական վեճերի. նրա հիմնական հակառակորդները տարբեր տեսակի գնոստիկներն են: Այնուամենայնիվ, նրա աստվածաբանական հայացքների ամփոփ ներկայացումը չափազանց արժեքավոր տեղեկություններ կարող է տրամադրել ընդհանուր առմամբ Արեւելքի Եկեղեցու ավանդությունը հասկանալու համար:

Իր քրիստոսաբանական հայացքների մեջ, որոնք առավել հստակորեն ներկայացված են «Դրախտի մասին օրհներգեր» երկում, Եփրեմը հիմնականում խոսում է Հոր եւ Նրա Անդրանիկի մասին (ܒܘܩܪܐ - bouqra)<sup>92</sup>: Եփրեմն այդքան էլ չի անդրադառնում Ս. Հոգու թեմային: Այս փաստը կարող է բացատրվել հակաարիոսական վեճերի թեժացումով, ինչպես նաեւ մծղնեական աղանդի հանդեպ որոշակի վերապահումով (խոսքն արիոսականների՝ Որդու վերաբերյալ վարդապետության եւ մծղնեականների չափազանց շեշտված «հոգիաբանության» մասին է): Ընդհանուր առմամբ Եփրեմի ամբողջ մտահամակարգը, զարգանալով հիմնականում սուրբգրային մեկնության շրջանակներում, սերնդեսերունդ դառնում է Աստծո՝ Իր Որդու մեջ ունեցած հայտնության շուրջ: Մարդու անհույս ջանքերը՝ Աստծուն հասնելու համար, չէին կարող որել արդյունքի հանգել առանց Աստծո կամավոր ընդառաջման՝ հայտնության: Անհասանելի ու անըմբռնելի գոյի եւ արարչության միջեւ առկա անդունդը լցվեց աստվածային սիրով<sup>93</sup>: Եփրեմի կողմից Աստծո հայտնությունը դիտարկվում է Նրա անհասանելիության հետ անմիջական կապի մեջ, ինչն արամեախոս աստվածաբանական դպրոցի ավանդական հատկորոշիչ կողմն է: Ըստ Եփրեմի՝ աստվածային հայտնությունները փրկագործության պատմության մեջ հանդես են գալիս ոչ թե իբրեւ մի նոր, իր տեսակի մեջ արտասովոր գիտություն, այլ իբրեւ մի գործընթաց, որի մեջ Աստված միջամտում է անձամբ՝ ստեղծելով

92 Օրհներգությունք ի վերայ դրախտին, Թ, 24-29 (Եփրեմ Ասորու երկերից կատարված հղումները տրվում են ըստ հետեւյալ հրատարակության՝ *Ephraemi Syri opera omnia quae extant graece, syriace et latine in sex tomos distribute*. Romae, 1732-1746. – I-III: ed. **Joseph Simonius Assemanus**; IV-V: ed. **Maronite Jesuit Mubarak**, or **Benedictus**; VI: ed. **Stephanus Evodius Assemanus**):

93 Յաղագս Հաւատոյ, ԿԹ, 8-17:

աստիճանական մի մարմնավորում: Բնության մեջ եւ Աստվածաշնչում թողնելով իր հայտնության նշանները՝ Աստված Ինքը, իբրեւ ամեն պատկերից, ձեւից ու անունից վեր, «զգեստավորվում» է դրանցով<sup>94</sup> դրանով իսկ նախապատրաստելով իր ամբողջական հայտնությունը, որն իրականանում է մարդեղությամբ՝ ի դեմս Հիսուս Քրիստոսի<sup>95</sup>: Ինչպես գրում է A. de Halleux-ն՝ «իհարկե, պատկերների անհաստատության եւ մարմնի իրականության միջեւ դեռեւս առկա է մի հսկայական տարբերություն, սակայն եւ այս, եւ մյուս դեպքում Աստված Ինքը, այսպես ասած, դուրս է գալիս իր հավիտենական պարզությունից՝ պատմության բազմազանության մեջ մտնելու նպատակով»<sup>96</sup>:

Միայն այս դեպքում է հնարավոր խոսել փոփոխությունների մասին (تعديلات - *shihlape*), որոնք Աստված, իբրեւ ըստ իր բնության անփոփոխ, իր սիրո մեջ ընկալում է<sup>97</sup>: Լինելով Ինքն իր մեջ անչափելի՝ Նա չափավորվում է արարչության մեջ, եւ մարդեղությամբ<sup>98</sup>: Բայց նույնիսկ այս արտահայտումների մեջ մեզ հայտնվում է միայն Նրա փառքի մի թույլ յույսը<sup>99</sup>: Այս խոնարհումը, չափավորությունը հենց Նրա Մեծության գաղտնիքն է: Քանզի Աստված, ինքն Իրեն կապելով Արարչությանը, չի կորցնում իր անսահմանությունը եւ, ժամանակի մեջ Իր մուտքով, մնում է անժամանակ ու հավիտենական: Աստծո մեջ այս «փոփոխությունը», Եփրեմի համաձայն, չի վերաբերում Նրա անփոփոխ բնությանը, այլ միայն՝ Նրա կամքին: «Փոփոխությունները» թելադրված են ոչ թե ինչ-ինչ անհրաժեշտությամբ կամ կատարյալ աստվածության մեջ թերությամբ, այլ միայն մեր փրկության հանդեպ Նրա անմնացորդ ցանկությամբ (سبىانآ - *sbyānā*)<sup>100</sup>: Եփրեմի վերոնշյալ մտքերը հետագայում դառնալու են Արեւելքի Եկեղեցու քրիստոսաբանական զարգացման հիմնաքարերը: Ինքը՝ Եփրեմն ակնարկում էր նախեւառաջ արիոսականներին, որոնք, նկատի ունենալով Քրիստոսի մեջ առկա մարդկային տկարությունները, դրանք վերագրում էին Նրա՝ արարած լինելուն, ինչպես նաեւ մարկիոնականներին, որոնք, մատնանշելով աստվածաշնչյան անթրոպոմորֆիզմները, հավատում էին, թե նկարագրված Գոյությունը ոչ թե Արարիչն է, այլ դեմիուրգը: Ըստ Եփրեմի՝ իրականում Աստված, ողջակեզների անուշ բուրմունքի կարիքը չունենալով, թույլ էր տալիս եւ ընդունում դրանք, որպեսզի մարդը, այդ ողջակեզներն Աստծուն մատուցելով, դրանց միջոցով

94 Մարգարիտ երկնային կամ Յաղագս հաւատոյ ճառք եօթթ, ճառ Է, 5:

95 Օրհներգ ի վերայ Մծբնայ, Գ, 3; ԽԸ, 7; Յաղագս Հաւատոյ, ԺԱ, 9; ԺԷ, 5; Ծ, 5; Ընդդէմ Հերձուածողաց, ԼԲ, 8-9; ԼԳ, 6:

96 Տէն **DE HALLEUX, André, O. F. M.**, *Mar Éphrem théologien.*// *Parole de l'Orient* (Kaslik), Vol. IV, No. 1-2 (1973), էջ 35-54, [12]/46.

97 Յաղագս Կուսութեան, ԻԸ, 11:

98 Յաղագս Հաւատոյ, ԼԱ, 4; ԼԲ, 8-13:

99 Ընդդէմ Հերձուածողաց, Լ, 4:

100 Յաղագս Եկեղեցոյ ԻԱ, 3; Յաղագս Հաւատոյ, ԼԱ, 2-3, 8-10; ԼԲ, 14; Ընդդէմ Հերձուածողաց, Լ, 1-4; ԼԳ, 1-9; ԼԶ, 5-6:

կարողանա փրկվել: Այդպես եւ Քրիստոս կամավոր կերպով իր վրա առավ մեր մարդկային բնությունն իր բոլոր տկարություններով՝ միայն ու միայն մեզ կյանք շնորհելու նպատակով<sup>101</sup>:

Իր Հայտնության եւ Մարդեղության մեջ Աստծո՝ մեր տկարություններն ընդունելու իրողությունը բացատրելու համար Եփրեմն օգտագործում է հայելու օրինակը: Ինչպես որ հայելին, այդպես էլ Աստված անդրադարձնում է տարիքը՝ բնավ տարիք չճանաչելով, դառնում է երեխա, աճում՝ ըստ մեր բնության օրենքների, «զգենում» է մեր բոլոր պատկերներն ու մեր գոյության բոլոր նրբերանգները՝ դրանով հանդերձ չկորցնելով իր լուսավոր աստվածության փայլը, եւ գերազանցելով դրանցից յուրաքանչյուրը<sup>102</sup>:

«Զգենալու» պատկերները, ինչպես Ափրահատի պարագային, Եփրեմի երկում նույնպես առկա են առատորեն: Դրանք ընդհանրապես բնորոշ են ասորերենին, իսկ դրանց միջոցով փոխանցվող իրողություններն ամենատարբեր բնույթի են: Հետագայի արեւմտյան քրիստոսաբանական վեճերի ժամանակ դրանց հանդեպ դրսևորվող ընդդիմություններն ի հայտ բերեցին այն անհասկացողությունը, որն այդպես էլ չընկալեց արամեախոս քրիստոնյաների լեզվամտածողության մեջ արմատացած այդ առանձնահատկությունը:

Անտեսանելի, Անիմանալի ու Անհասանելի Արարիչն «զգենում» է իր իսկ ստեղծած բնությունը՝ արարչությանն ավելի հասանելի դառնալու նպատակով: «Փառք Անտեսանելիին, - գրում է Եփրեմը, - որ ինքն իրեն տեսանելիությամբ զգեստավորեց, որպեսզի իրեն բերի մեղավորներին:... Անհասանելի բնությունը մարմին զգեցավ այն նպատակով, որպեսզի ամեն շրթունք կարողանա համբուրել նրա ոտքերը, ինչպես դա արեց մեղավոր կինը»<sup>103</sup>: Եղական բնության նմանատիպ ընկալման մեջ է ամփոփված մեր փրկության աստվածային տնօրինության կարեւորագույն «արարքը»: «Դու ես, որ քո մեջ ձեւավորեցիր ծառայի մարմին, որպեսզի դրա միջոցով կարողանաս քեզ ցանկացողներին տալ այն ամենը, ինչ նրանք կամենում են: Ավելին, քո մեջ հայտնվեցին քեզ սպանողների ու թաղողների գաղտնի խորհուրդները, քանի որ դու ինքդ քեզ մարմնով պատեցիր: Քանզի այդ մարմինն օգտագործելով՝ քեզ սպանողները սպանեցին Քեզ՝ քեզանից իսկ սպանվելով, եւ այդ մարմինն օգտագործելով՝ քեզ ճանաչողները թաղեցին քեզ՝ Քո կողմից իսկ փառավորվելով-բարձրացվելով: Այս Անհասանելի գորությունն իջավ ու զգեցավ մարմնական խոցելի անդամներ, որպեսզի ցանկացողները կարողանան մոտենալ Նրան, որպեսզի, դիպչելով նրա Մարդկությանը, կարողանան դիպչել Նրա Աստվածությանը»<sup>104</sup>:

101 Ընդդեմ Հերձուածողաց, I, 1-4; IԳ, 1-8; IԶ, 1-6; Յաղագս Կուսութեան Դ, 5-6:

102 Ընդդեմ Հերձուածողաց, IԲ, 3-16:

103 Ճառս Երիսս ի Տէրն մեր, ԽԶ:

104 Ճառս Երիսս ի Տէրն մեր, Ժ:

Մարդկություն «զգենալով»՝ Աստծո Որդին խոնարհեցնում է Ինքն իրեն: «Արարչի Որդին, ինքն էլ իբրև Արարիչ, հար եւ նման է Հորը: Նա մաքուր մարմին զգեցավ, պատվեց դրանով ու եկավ զգեցավ մեր տկարությունը փառքով, որն իր ողորմությամբ Նա Հորից էր բերել<sup>105</sup>: ...Խոնարհվելուց ու մարմին զգենալուց առաջ մեր Տերն իր Հոր հետ էր բարձունքներում, բայց այդ բարձրության մեջ մարդիկ խոնարհություն չսովորեցին: Բայց երբ նա խոնարհվեց բարձունքներից, Նրա խոնարհությունը շուտով սկսեց տարածվել մարդկանց մեջ<sup>106</sup>: Նրա այս խոնարհությունը Իրեն հավատարիմներին մի կոչ է՝ «պատվելու խոնարհությամբ ու համեստությամբ»<sup>107</sup>: Մարդկային բնությամբ Աստծո Որդին իր վրա է վերցնում նաեւ չարչարանքը: «Նա պատվեց չարչարանքներով, երբ գամերը մխրճվեցին նրա մարմնի մեջ», - գրում է Եփրեմը<sup>108</sup>: Ինչպես Ափրահատը, Եփրեմը նույնպես խորհրդապաշտ միստիկ է, որի համար քրիստոնեական խորհուրդն ու գործն անբաժանելի են:

Բայց համեստությամբ եւ խոնարհությամբ պատվելը նաեւ ապագա փառքի գրավականն է: «Մի ժամանակ խանձարուրով փաթաթված այս Երեխան Իր ներողամտությամբ պատվեց քահանայության մեջ, իսկ վեհությամբ՝ մարգարեության մեջ: Քանզի Միմեռնը դրանց միջոցով պատվեց Նրան եւ տվեց այն Կնոջը, ով Նրան խանձարուրով էր պատել»<sup>109</sup>: Մարդեղությունը, Կրքերն ու Հարությունը Փրկագործության տնօրինության փուլերն են: «Փառաբանեք Նրան՝ մեր մարմնով Զգեստավորվածին, մահացածին եւ հարուցյալին: Նա մահացավ մեր մեջ, եւ մենք ապրում ենք Նրա մեջ, օրինյալ է Նրան Ուղարկողը»<sup>110</sup>:

Նույնքան բազմաբնույթ է Եփրեմի օգտագործած «բնակեցման» կամ «բնակվելու» պատկերը, որը հետագայում Արեւելքի Եկեղեցու քրիստոսաբանության հիմնաքարերից մեկն է դառնում. արդյունքում այն հակառակորդ աստվածաբանների շրջանակներում թյուր ընկալման ու դժգոհությունների առիթ է տալիս: Ինչպես Ափրահատի, այնպես էլ Մար Եփրեմի մոտ Քրիստոսի մարդկային բնության մեջ աստվածայինի բնակեցման եւ մարդկանց մեջ Աստծու բնակվելու իրողությունների միջեւ հստակ տարբերակումներ առկա չեն: «Օրինյալ է արգանդում Բնակվածն ու այնտեղ Իր համար ձեւավորված Տաճարը, որպեսզի բնակվի դրանում, եւ Գահը, որպեսզի բազմի դրա վրա, եւ Զգեստը, որպեսզի զարդարվի դրանով, Զենքը, որպեսզի հաղթանակի դրա-

105 Օրհներգությունը ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն է:

106 Ճառս Երիսս ի Տերն մեր, ԼԹ:

107 Ի վերայ մեղաւոր կնոջն, Դ:

108 Մարգարիտ երկնային կամ Յաղագս հաւատոյ ճառք եօթթ, ճառ Գ, 2:

109 Ճառս Երիսս ի Տերն մեր, ԾԱ:

110 Օրհներգ ի վերայ Մծբնայ, ԿԶ, 21:

նով<sup>111</sup>:... Յանկություն հայտնեք, ով անաղարտ հոգիներ, որպեսզի իմ Սիրելին բնակվի ձեր մեջ: Դուք նույնպես, պիղծե՛ր, որպեսզի Նա սրբագործի ձեզ<sup>112</sup>:... Սուրբը մարմնապես է արգանդում բնակվել, իսկ հոգու մեջ Նա հոգեպես է բնակվում»<sup>113</sup>: Ինչպես հետագայում ցույց կտա Արեւելքի Եկեղեցու աստվածաբանական դպրոցի մեկ այլ նշանավոր ներկայացուցիչ՝ Մար Բաբա Ռաբբան, սույն պատկերները, առանձին վերցրած, քրիստոսաբանական ճշգրիտ բանաձեւումներ չեն ներկայացնում: Դրանք անքակտելիորեն կապված են միմյանց հետ եւ կոչված են միայն դրանք ընկալողներին Անպատմելի Մարդեղացման աննկարագրելի խորհրդին մոտեցնելուն: «Դու նվաստացար, որպեսզի բոլորին կյանքի կոչես: Փառք քեզ ամենքից՝ Քո ձեռամբ կենդանություն առածներից: Ո՛վ կարող է խոսել Խորախորհուրդ Աստծո Որդու մասին, ով խոնարհվեց եւ Ինքն իրեն արգանդում մարմնով զգեստավորեց: Նա ծնունդ առավ արգանդից, նորածնի պես սնվեց կաթով, եւ մյուս երեխաների մեջ աճեց ամենքի Աստծո Որդին: Տեսանելի կերպով փողոցներում Նրան շրջապատում էին երեխաները, իսկ անտեսանելի կերպով՝ երկյուղած հրեշտակները<sup>114</sup>:... Բոլոր հաղթանակները բերում է այս ամիսը, հոգին ազատագրվում է, մարմինը՝ հնազանդվում, կյանքը բերվում է մահկանացուներին, Աստված Իր սիրով գալիս է, որպեսզի բնակվի մարդկության մեջ»<sup>115</sup>:

«Աստծու հայտնությունն անսպառ խորհրդի հայտնություն է, մարդկային բնություն առնելով Աստված ոչինչ չի կորցնում» գիտակցությամբ բացատրվում է Արեւելքի Եկեղեցու ողջ ավանդությանը բնորոշ յուրահատուկ այն շեշտադրումը, ըստ որի՝ Խաչի վրա Քրիստոս գուրկ է եղել կրքերից: Այն ժամանակ, երբ Քրիստոս ըստ մարմնի չարչարվում էր Խաչի վրա, նույն պահին էլ Նա, որպես Որդի Աստուծո, աշխարհին էր տիրում: «Այն ժամանակ, երբ արգանդում Նրա մարմինը թույլ էր, Նրանում Նրա ուժը չէր սպառվում: Այն պահին, երբ փայտի վրա հյուծվում էր Նրա մարմինը, Նրա ուժը չէր վերանում: Այն ժամանակ, երբ Նա Խաչի վրա կյանք էր շնորհում մահացածներին, Նրա մարմինը կամ կամքն էին կյանքը պարգետում: Այնպես էլ, երբ Նա ամբողջապես բնակվում էր արգանդում, անտեսանելի կերպով ամեն ինչ Նրա կամքով էր լինում: Տե՛ս, երբ Նա Խաչից էր կախված, Նրա ուժը բովանդակ արարչությունն էր շարժում: Տե՛ս, Նա Խաչի վրա էր ամբողջապես, եւ միեւնույն ժամանակ Նա ամենուր էր»<sup>116</sup>:

111 Օրհներգությունք ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն Բ:

112 Օրհներգությունք ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն ԺԱ:

113 **ИЛАРИОН (АЛФЕЕВ)**, *Восточные отцы и Учители Церкви IV века*. Антология в 3-х тт. – Москва: Изд-во МФТИ, 1999, էջ 408; Օրհներգությունք ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն Գ:

114 Օրհներգությունք ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն Գ:

115 Օրհներգությունք ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն Դ:

116 Օրհներգությունք ԺԹ վասն մարմնական Ծննդեանն Քրիստոսի, Օրհներգություն Գ:

Հատկանշական է, որ Եփրեմը Խաչի վրա Քրիստոսի մարդկային թուլությունները զուգահեռաբար կապում է Նրա մանկության թուլությունների հետ:

Իր Հայտնության մեջ Աստված Խորախորհուրդ է մնում, պատկերները, որտեղ Նա հայտնվում է, Նրան որքանով որ հայտնում, այնքանով էլ ծածկում են, որքան Նա մոտ է թվում, այնքան էլ Նա անհասանելի է մնում<sup>117</sup>: Այդ պարադոքսն արտահայտում են Չարչարանքներին եւ Սուրբ Ծնունդին նվիրված՝ Եփրեմ Ասորու հակադրություններով լեցուն ջքնաղ բանաստեղծությունները, որտեղ, իրենց առավելագույն դրսևորումներով հանդերձ, համատեղված են ուժն ու թուլությունը:

Ասորիքում Եփրեմի գրվածքների նմանատիպ հանրաճանաչության ձեռքբերումը պատահական չէր: Դրանցում ընթերցողներն Արեւելքում քրիստոնեության ընդունման ժամանակներից պահպանված արեւելյան մտածողությանը բնորոշ կյանք եւ պատկերների ու արտահայտումների խաղ էին տեսնում: Արեւմտյան Ասորիքի հունալեզու հեղինակները Եփրեմի գրվածքներն ընթերցում էին հունարեն թարգմանություններով եւ դրանք ընկալում որպես Ավանդության ակնհայտ վկայություններ: Արեւելքում, իր հերթին, հունարենից թարգմանվում էին «արեւմտյան» հեղինակների աշխատությունները, ինչն էլ նպաստում էր քրիստոնեական կայսրության հեղինակության վրա հենված հելլենիստական ազդեցության ընդարձակմանը: Հունալեզու հեղինակներից ոմանք, ի մասնավորի Թեոդորոս Մոփսուեստացին եւ վերջինիս ուսուցիչ Դիոդորոս Տարսոնացին, այնքան մեծ ազդեցություն են ձեռք բերում, որ Ուսուցիչներ են հռչակվում, ովքեր հունարեն լեզվով պատշաճորեն արտահայտել եւ զարգացրել են Արեւելքի Եկեղեցու Ավանդությունը:

Ռուսերենից թարգմանեցին եւ ծանոթագրեցին

**Տ. ՇԱՀԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆԸ  
ՅՈԼԱԿ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**

<sup>117</sup> Յաղագս Հաւատոյ, Դ, 9-11; ԻԶ, 6-13; ԾԱ, 2-3; ՀԹ, 9-20:

**СОДЕРЖАНИЕ**

***ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ. БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ***

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II,  
сказанное в Национальном Кафедральном соборе Вашингтона  
во время экуменической службы..... 5

Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II,  
сказанное во время св. литургии ..... 9

Поздравительное послание Его Святейшества Католикоса Всех Армян  
Гарегина II в связи с праздником Дня республики ..... 12

Проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II,  
читанная при освящении церкви св. Архангелов г. Севана ..... 13

Проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II,  
читанная при освящении церкви св. Иоанна г. Арташата..... 15

***РЕЛИГИЕВЕДЕНИЕ***

**НИКОЛАЙ СЕЛЕЗНЕВ** - Христология Ассирийской церкви Востока ..... 19

***ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ***

**СИЛЬВА ПАПИКЯН** - О лексемах նուր (дар) и ցաշուղ (почитать) ..... 49

**ДАВИД ГЮРДЖИНЯН** - Эпитеты лексемы հայրենիք (родина).  
Ов. Туманян и другие ..... 55

**ЕРДЖАНИК ГЕВОРКЯН, СУСАННА ГЕВОРКЯН** - Вопрос как  
стилистическое средство в произведениях Гарегина Нждэ  
и литературно-публицистическом наследии ..... 70

**РУБЕН МЕЛКОНЯН, АНУШИК МАРТИРОСЯН** - Постмодер-  
нистский “новаторский роман” как провозвестник  
упадка традиций турецкого политического романа..... 89



**СООБЩЕНИЯ**

<b>АРХИМАНДРИТ ШАГЕ АНАНЯН</b> - Международная конференция “Церковь и государство в Киликийской Армении. Взгляд изнутри и снаружи” в Первопрестольном св. Эчмиадзине.....	98
<b>ОВАНЕС БЕЙЛЕРЯН</b> - Сложности при толковании притчи об Управителе в средневековой армянской рукописной традиции.....	102
<b>АЙК АКОБЯН</b> - Особенности заказа литургий .....	112
<b>АХАВНИ ЖАМКОЧЯН, ФРИНА БАБАЯН</b> - Раскопки дворцового комплекса мелика Егана в с. Тох .....	122
<b>АНУШ ЛАЛАЯН</b> - Поиски истины в драме личности.....	137

**РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ**

<b>ЭДУАРД МКРТЧЯН</b> - Гурген Хачатрян. Грабар, Ереван, 2014, 492 с. ....	143
--	-----

**CONTENTS**

***PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING***

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,  
during the ecumenical service at the National Cathedral of Washington ..... 5

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,  
during the Divine Liturgy ..... 9

Message of congratulation of His Holiness Karekin II, Catholicos  
of All Armenians, on the occasion of the Feast of the Republic..... 12

Sermon of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,  
on the occasion of the consecration of Sts. Archangels Church of Sevan ..... 13

Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians,  
on the occasion of the consecration of St. Hovhannes Church of Artashat ..... 15

***RELIGIOUS STUDIES***

**NIKOLAY SELEZNYOV** - The Christology of the Assyrian Church  
of the East ..... 19

***HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES***

**SILVA PAPIKYAN** - On words “gift” and “to worship”..... 49

**DAVID GYURJINYAN** - Epithets of the word “fatherland”:  
Hovhannes Tumanyan and others ..... 55

**YERJANIK GEVORGYAN, SUSANNA GEVORGYAN** - Question as a  
stylistic device in works by Karekin Nezhdeh  
and in his literary-rhetoric legacy ..... 70

**RUBEN MELKONYAN, ANUSHIK MARTIROSYAN** - Postmodernist  
“innovative novel” as a herald of the fall  
of traditions of Turkish political novels ..... 89

***ESSAYS***

<b>ARCHIMANDRITE SHAHE ANANYAN</b> - “Church and State in Cilician Armenia: Glance from Inside and Outside” international conference in the Mother See of Holy Etchmiadzin.....	98
<b>HOVHANNES BEYLERYAN</b> - Commentary difficulties of the parable of the Unjust Steward .....	102
<b>HAYK HAKOBYAN</b> - Peculiarities of ordering Divine Liturgies .....	112
<b>AGHAVNY ZHAMKOCHYAN, FRINA BABAYAN</b> - Excavations of Melik Yegan’s palace in village Togh.....	122
<b>ANUSH LALAYAN</b> - Search for the truth in the drama of an individual .....	137

***LITERARY REVIEW***

<b>EDWARD MEKERTCHYAN</b> - Gourgen Khachatryan, Classical Armenian Language, Yerevan, 2014, 492 pages .....	143
---	-----

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

**ՆԱՅԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Տայոց Կաթողիկոսի խոսքը  
 Վաշինգտոնի ազգային Մայր Տաճարում  
 Էկումենիկ արարողության ժամանակ.....5

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Տայոց Կաթողիկոսի խոսքը  
 հրնթացս Ս. Պապարագի արարողության..... 9

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Տայոց Կաթողիկոսի  
 շնորհավորական ուղերձը Տանրապետության փոնի առիթով..... 12

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Տայոց Կաթողիկոսի քարոզը՝  
 խոսված Սեանի Ս. Տրեշպակապետաց եկեղեցու օծման առիթով ..... 13

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Տայոց Կաթողիկոսի խոսքը  
 Արտաշատի Ս. Նովհաննես եկեղեցու օծման առիթով..... 15

**ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ**

ՆԻԿՈՒԱՅ ՍԵԼԵՂՆՅՈՎ - Արևելքի Ասորական Եկեղեցու  
 քրիստոսաբանությունը ..... 19

**ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

ՍԻՒՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ - «Նուր» և «պաշտել» բառերի մասին.....49

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ - Տայրենիք բառի մակդիրները.  
 Նովհաննես Թումանյան և ուրիշներ.....55

ԵՐՋԱՆԻԿ ԳԵՒՈՐԳՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՒՈՐԳՅԱՆ - Տարցը  
 որպես ոճական միջոց Գարեգին Նժդեհի աշխատություններում  
 և գրական-հոերորական ժառանգության մեջ ..... 70

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՆՈՒՇԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - Պոսպ-  
 մողեոնիստական «նորարական վեպը» որպես թուրքական  
 քաղաքական վեպի ավանդույթների անկման ազդարար .....89

## **ՆԱԶՈՐԴՈՒՄՆԵՐ**

<b>Տ. ՇԱՆԵ ՎՐԴ. ԱՆԱՆՅԱՆ</b> - «Եկեղեցի եւ պերություն Կիլիկյան Նայասարանում. հայացք ներսից եւ դրսից». միջազգային գիտաժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում .....	98
<b>ՆՈՎՆԱՆՆԵՍ ԲԵՅԼԵՐՅԱՆ</b> - «Անիրավ փնտեր» առակի մեկնության բարդությունները հայ միջնադարյան մարենագրական ավանդության շարակարգում .....	102
<b>ՆԱՅԿ ՆԱԿՈՒԲՅԱՆ</b> - Պարարագների պարվիրման առանձնահատկությունները .....	112
<b>ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ, ՖԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ</b> - Մելիք Եգանի պալարական համակառույցի պեղումները Տող գյուղում .....	122
<b>ԱՆՈՒՇ ԼԱՍՅԱՆ</b> - Ճշմարտության որոնումն անհարի դրամայում .....	137

## **ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

<b>ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ</b> - Գուրգեն Խաչատրյան, Գրարար, Երևան, 2014, 492 էջ.....	143
--	-----